Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀԱՄԱՉԱՍՊ ՔՀՆԵՑ. ՌՈՒԲԷԼԵԱՆ

ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

(Բ. տպագրութիւն)

Տպարան ՍԲ. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ Վանքի
Նոր Ջուղա
1984

ՆԱԽԱԲԱՆ

Մկրտութեան մասին գրի առնելով այս փոքրիկ աշխատութիւնը, ցպատակս է ունելի մօտիկից ծանօթացնելու հայ ընթերցասէր ընտանիքներին մկրտող մանկան շուրջ կատարուելիք այն անհրաժեշտ պարագաները, որով նկեղեցու օրէնքների ու ծէսերի ճերմոյ քրիստոնէութեան գիրկն ենք հրաւիրում նորածին հայ զաւակին Ս. Աւազանի մկրտութեամբ։

Հետեւեալ էջերում դատում եմ խօսելու մկրտութեան ծագումի համար Մովսէսի, Յովհաննէսի, Յիսուս Քրիստոսի ջրով եւ Սուրբ Հոգւով մկրտութեան, հայ ժողովրդի դէպի Քրիստոնէութեան դարձի, լուսաւորիչ Հայրապետի ծնոմով հրաբոով մկրտելու եւ մկրտութեան խորհուրդ հաստատելու հայոց մէջ, որ օգտել ենք հայ մատենագրերից ու զանազան աղբիւրներից։

Ընթերցողների ուշադրութեանն եմ յանձնում հայ անուններին, ազգային աւանդութիւններին, ծննդեանի համար Փառք ի Բարձունսի կատարման, Սուրբ Միւռոնի, կնքահօր եւ այլ

ազգությունից, որ դնում պահպանում են իրանահայ ընտանիքների մեջ։

Թարգմանաբար բնում են միտությունն արարողությունը խարհրդակատարությունն այն ծիսարանից, որ տարին ի վեր գործադրում է Իրանի հայ գաղութներում, մասնավորապես Ն. Ջուղայի թեմերում, նաև այլ մատոցներից տարբեր մեջբերումներով։ Ցանալի է մեզ օգտակար կլինի ընթերցասեր հայ ընտանիքների համար։

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Խորհուրդ-բառը բառացի իմաստով ունի գանազան բացատրություն, սակայն կրոնական և աստուածաբանական իմաստով յատկությունն է անտեսանելի բաների, որ ըմբռնում ենք հաւատքով, որովհետև քրիստոնէական կրոնը ինքնին հիմնուած է հաւատքի վրայ։ Հետևաբար քրիստոնեան առանց հաւատքի չի կարող ընդունել խորհուրդը և առանց խորհուրդն ընդունելու չի կարող ապրել աստուածային շնորհների մէջ։

Խորհուրդները Հայ մարդու համար հոգևոր միջոցներ են հաւատքով կապուելու քրիստոնէական օրէնքին, ճանաչել Աստուծոյ ճշմարիտ ուսմունքները և ապրել նրա շունչով։ Հայաստանեայց եկեղեցու զաւակների համար այս գիտակցությունը կը դառնանք քրիստոնէական ուսման մէջ, որ պէտք է հաւատքով ու երկիւղածությամբ մօտենանք եկեղեցւոյ խորհուրդներին, ըմբռնենք նրանց իմաստը և զգանք աստուածային օրհնությունը մեզ վերայ։

Մեր Տէր Յիսուս Քրիստոսի կողմից եկած խորհուրդները երկու հատ են, Մկրտությունն և Հաղորդությունն, սակայն մեր եկեղեցու հայրերը

նրանց թիւը եօթինս են բարձրացրել։

Մարհուրգներն ունեն իրենց ձեռքի և արարողութիւնների ծիսակատարութեան լրացուցիչ անհրաժեշտ միջոցները, որ կատարւում են կարգաւոր հոգեւորականի ձեռամբ եկեղեցու մէջ։ Այստեղ խօսում եմ միայն մկրտութեան խորհրդի մասին, որ ուղղակի եկած է Յիսուս Քրիստոսի կողմից, որը իր յարութիւնից անմիջապէս յետոյ պատուիրեց աշակերտներին թէ, «Գնացէք այսուհետև քարոզեցէք Աւետարանը և մկրտեցէք հեթանոսներին Հօր, Որդւոյ և Սուրբ Հոգւոյ անունով»։ Մարհուրգները հաստատելով Հայաստանեայց Եկեղեցու սուրբերի կողմից նրանք հեռացրին Յիսուս Քրիստոսի մկրտութեան օրինակին, նորամանուկին Եկեղեցու գիրկը հրաւիրելու, Քրիստոսի ժառանգակից դարձնելու համար անհրաժեշտ համարեց ջուրը, միւռոնը,*) քաբէ աւազանը, մանուկը և կնքահայրը։

Մկրտութիւնը իբրև մի բան նշանակում է ջրով լուացում, այսինքն արտաքին մաքրութիւն, որ ունեն նաև բոլոր ազգերը, սակայն կրօնական իմաստով կոչւում է վերստին ծնունդ, ըստ Աւետարանի, «Պարտ է վերստին ծնուել»։ Զի ի մօրէ մարմնով ծնանիմք և յաւազանէն Հոգւով. ըստ այնմ. «Մնացեալն ի մարմնոյ մարմին է և ծնեալն ի Հոգւոյ Հոգի»։ Մօրից ծնւում ենք սկզբնական մեղքով, սակայն մկրտութիւնով մեղքերից սրբւելով ենք ծնւում։ Տաքնուց գիրք հարցմ. էջ 150։

Մկրտութիւնը սկիզբ առաւ Յիսուսի նախակարապետ Յովհաննէս Մկրտչից, որը կատարում էր ջրով և ապաշխարութեամբ, սրբելու համար ժողովրդի մեղքերը։ Յովհաննէս ինքն էլ վկայեց թէ, «Ես մկրտեմ զձեզ ջրով». Ես ձեզ ջրով եմ մկրտում ապաշխարութեան համար, բայց ով գալիս է ինձանից յետոյ, ինձանից աւելի հզօր է . . . . Նա կը մկրտի ձեզ Սուրբ Հոգով և հրով։ Մատթէոս Գ. 11։

Ագաթանգեղոսն իր պատմութեան մէջ գրում է «Տէրը նախապէս մեծն մարգարէ Յովհաննէսին ուղարկեց պատրաստելու նրա ճանապարհը ուղղելու նրա յայտնութեան շաւիղը։ պատուիրեց նրան ժողովրդին տալ ապաշխարութեան մկրտութիւն, ինչպէս որ Մովսէսն էր կատարում ջրով լուացումը իր ժամանակում»։ Յովհաննէսի

*) Եւ Քրիստոսի մկրտելովն ցուցաւ խորհուրդ մկրտութեան ի ջուր եւ ի հոգի, որ դուռն է ամենայն խորհրդոյ Քրիստոսի տնօրէնութեան, որովհետեւ իւրէ նոցա պատրաստեցան ի արքուիւն իւղն եւ հացն, եւ գինին։ Տաքեւ, Գիրք Հարցմ. էջ 93։

մկրտութիւնը աստուածգրշմ լուսաւոր կեանքի մկրտութիւն չէր, այլ թէ ապաշխարութեան մը-կրտութիւն էր, ինչպէս էր նաև Մովսէսի գրքում։ Երբ Աստուած ձայնում էր իր երեսուն մասին, Մովսէսը հրամայում էր ժողովրդին, լուացեն, մաքրեն, որ արժանի լինեն Տիրոջ փառքը տեսնելու։ Ագաթանգեղոս. էջ 143։

Այդ առթիւ գրում է նաև Տաթեւացին, Յովհաննէսի մկրտութիւնը մեղքերի ապաշխարութիւն էր և առաւել էր Մովսէսի աւազանից՝ որը միայն մարմնի մաքրութեան համար էր, սակայն նուազ էր Քրիստոսի մկրտութիւնից, որ Սուրբ Հոգուն էր։ Տաթեւացի Գիրք հարցմ. էջ 152. Հեռեւեալ տարբերութիւնը կըզանենք այս երեք մկրտութեան, այսինքը ջուրով լուացման մէջ, Մովսէս հրամայում էր ժողովրդին, որ ջրով լուացեն, մաքրեն, որպէսզի սրբուած երեւային Եհովայի փառքի առաջ. Յովհաննէս մկրտելով նրանց ապաշխարում էր, «Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւնն երկնից». Նա էլ պատրաստում էր «ապաշխարած և մեղքերից սրբուած ժողովուրդ», որ արժանի լինէին Փրկչի փառաց գալստեան։ Սակայն տարբեր է Յիսուս Քրիստոսի մկրտութիւնը նրանցից, որովհետև իր մէջ պարունակում է Դրոշմի խորհուրդը։ «Ըստ այսմ առ

գիւր հոգին ինքն էմանուէլն, և օծաւ Քրիստոս, քանզի նովաւ ի մեզ անցանէ շնորհն» այսպէս էմանուէլն հոգին իւր վերայ առաւ և օծաւ Քրիստոս, քանզի նրա միջոցով շնորհ եկաւ մեզ վերայ։ Լամբրոնացի. Մեկնութ. Խարհ. էջ 11։

Դրոշմի մասին բացում յիշատակութիւնները կան եկեղեցւոյ սուրբերի գրուածքներում, որոնք անհրաժեշտ եմ համարում բերել տողերիս մէջ։ «Հաճեցէք ընդունել հոգեւոր խորհրդական գրոշմ» կասէ Կիւրղի Հայրապետը, որ արժանի լինէք Տիրոջ հօտը կոչուելու։ Կիւրղի Հայրապետ. Երուսաղէմի էջ. 3. Դրոշմը մկրտութիւնից մի առանձին խորհուրդ է, գրոշմել նշանակում է կնքել երեխային, և այս այն կնիքն է, որի միջոցով է առնում Սուրբ. Հոգին։ Տաթեւաց Գիրք հարցմանց։ էջ 151։

Յովհան Օձնեցի Հայրապետը գրում է «Քրիստոսից է պարգեւած սուրբ իւղի այս աւանդը, որով մեզ վերայ ենք առնում սուրբ Հոգին միանալով Քրիստոսին»։ Օձնեցի Հայրապետ. էջ 151։ Ըստ Հայաստանեայց Եկեղեցւոյ մկրտութեան խորհրդի, գրոշմը, որ ջրով մկրտելու անբաժան մասն է կազմում մկրտողի համար, Յորդանանից է աւանդած մեզ Սուրբ Հոգւոյ նմանութեամբ, երբ Յիսուս մկրտելիս ազաւնակերպ

իշաւ նրա վրայ։ Յիսուսը մեզաւոր չէր, որ եկաւ մկրտուելու Յովհաննէսից ջրով և սպաշխարութեան լուացումով, քաւ լիցի, Յիսուս ինքն էլ ունէր մարդկային բոլոր հանգամանքները բացի մեղքից։ Նա անկարօտ էր մաքրութեան կամ սպաշխարութեան. սակայն խոնարհուեց, մկրտուեց և սպաշխարեց, մարդկութեանը ցոյց տալու համար վերսին ծննդեան ջրով և Հոգով մկրտուելու անհրաժեշտութիւնը։ Նման օրինակներով եւրեւում են Աւետարանի մէջ նշանաւոր հատուածները, ինչպիսին է Փարիսեցի իշխան Նիկոդիմոսի գիշերուան գաղտնի տեսնուելը Յիսուսի հետ, որ գրում է Յովհաննէս Աւետարանիչը, թէ-սա գիշերով եկաւ Յիսուսի մօտ և նրան ասաց. «Ռաբբի, գիտենք, որ Աստուց ես եկել որպէս վարդապետ ...» և այլն։ Սա գաղտնի սիրում էր Յիսուսին, նա էլ գիտէր նրա հաւատքի մասին և ասեց Նիկոդիմոսին, «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթէ մէկը վերսին չծնուի չի կարող Աստծոյ արքայութիւնը տեսնել»։ Սակայն երբ Նիկոդիմոսը վերսին ծնուելու անկարելիութեան համար կասկածեցաւ, Յիսուս նորէն տալիս է նրան պատասխանը, «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթէ մէկը ջրից ու Հոգուց չծնուի, չի կարող Աստծու արքայութիւնը մտնել»։ Յովհաննու

Աւետարան. Գ. 1-9։

— Յիսուսի խօսքը հոգեւոր ծնունդի մասին է և տալիս է նրան հետեւեալ բացատրութիւնը։ Թէ ինչպէս քամին փչում է և մենք լսում ենք նրա ձայնը, սակայն չենք իմանում որ կողմից է գալիս և գէպի ուր է գնում։ Վերսին ծնունդը էլ այսպէս անտեսանելի ու անշօշափելի է։ «Պարտ է քեզ վերսին ծնուել» կրկնում է նա։ Յիսուս յարութիւնից յետոյ նոյն բովանդակութեան խօսքերով պատուիրեց առաքեալներին, թէ Գնացէք և մկրտեցէք ազգերը՝ Հօր Որդւոյ և Սուրբ Հոգւոյ անունով. և ինքն էլ վերջին ընթրիքից յետոյ, կասէ Յ. Օձնեցի հայրապետը փակեց հին ուխտը և իւրմով հիմք գրեց մի նոր ուխտի, այնտեղից հաղորդեց այս խորհուրդը։ Ինչպէս օտար ազգեր՝ նոյնպէս էլ հրէաները մի նորածին մանկան կոչման համար ունէին յատուկ արարողութիւն օրէնքի ձեւերի ներքոյ։ Յիսուսի մանկութեան պարագաներն էլ նոյն ձեւով կատարուեցին, այսինքը ութօրեայ թլպատումը, անուանակոչութիւնը, քառասնօրեայ Տաճար բերելը և այլն, հետեւաբար այդ ձեւերից զատ, նրա երեսնամեայ մկրտութիւնով, քառասնօրեայ սպաշխարումով տարբեր քնոյթ ստացաւ Մովսիսական հին օրէնքից, որի շուրջ կատարեցին

չարչարանքով մահը, երեքօրեայ յարութիւնը և քառասնօրեայ համբարձումը։ Հայ Առաքելական եկեղեցուն պատկանող ծնողների զաւակին Քրիստոսի ժառանգակից և երկնաւոր Հօր որդեգիր դարձնելու համար եկեղեցու սուրբ աւազանով կատարում ենք մկրտութեան և գրոշմի արարողութիւնը, ծիսակատարութեան յատուկ մաշտոցով, որի մէջ պարունակում է Ցիսուսի շուրջ կատարուած, ծնունդից մինչև յարութիւնը բոլոր երեւոյթները, բացի ուրօրեայ թլպատութիւնից։ «Ըստ Պօղոսի, եթէ թլպատութիւն անէք, ձեզ ոչինչ բանով չի օգտի. կասէ Քրիստոս»։

Հետագայ էջերում իր հերթին քերում ենք յուսարանութիւն մկրտութեան շուրջ կատարուելիք կարեւոր մէջբերումներ։

ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ՄԷՋ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Ապրեցոյց զմեզ ի ձեռն աւազանին միւսանգամ ծննդեան եւ նորոգութեան
Հոգւոյն սրբոյ։ Տիտոս Գլ. 5—6

Ցիսուսի համբառնալուց յետոյ նրա աշակերտները, ըստ Աւետարանի «Որպէս զառ ի մէջ գայլոց» Սուրբ Հոգով զինուած սիրտ առան մրտնել հեթանոսների մէջ խոնարհ խաւերից սկսած մինչև արքայական պալատները, քարոզեցին Աւետարանը, յանուն հաւատքի խաչուեցին, տանջուեցին մինչև կարողացան աշխարհի մէջ տարածել քրիստոնէութիւնը և կատարեցին Տիրոջ պատգամը, մկրտելով հեթանոսներին Հօր, Որդւոյ և Սուրբ Հոգւոյ անունով։

Հեթանոս թագաւորների մէջ առաջին Քրիստոնէութեան և մկրտութեան ընդունողն եղաւ Հայոց Արգար թագաւորն Եղեսայում իր ընտանիքով ու պալատականներով։ Հաւատացին և մկրտուեցին Սանատրուկի գուսան Սանդուխտ կոյսը, Ոսկեանք, Սուքիասեանք և շատ ուրիշները։ Առաջին գարից սկսած մինչև չորրորդ գարի սկիզբը,

քոլոր նորագարձ, հետևաբար հայ քրիստոնեաները գտնուում էին հալածանքի տակ, սակայն սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետի ձեռքով նոր կըրօնի հաստատման հետ աւելի ամուր հիմքերի վերայ գրւեց Քրիստոսի եկեղեցին, նրա ձեռքով առաջին անգամ կատարւեց հանդիսաւոր մկրտութիւն Հայաստան աշխարհի մէջ, Կեսարիայից գառնալուց անմիջապէս յետոյ և մկրտեցին Հայոց Տրդատ Թագաւորն, որքայական գերդաստանն ու պալատականները բազմաթիւ ժողովրդի հետ Եփրատի ջրերում, Նոր Վիրապից ելնելով Լուսաւորիչ Գրիգորը, առաջին անգամ հոգ տարաւ քրիստոնէութիւնը տարածել հեթանոս հայոց մէջ և սկսեց մշակել, որքել ու լուսաւորել ժողովրդի խոպան սրտերը կռապաշտութեան խաւարից, ապա վերստին ծնունդի խորհուրդը յայտնելու համար կատարեց ջուրով և սուրբ Միւռոնով հանդիսաւոր մկրտութիւնը, ծնունդ տալով մի նոր հաւատքի ժողովուրդ։ Ըստ պատմագրաների Լուսաւորիչը նորագարձ հայոց մկրտելու համար ապաշխարելու պահք էր որոշել միամսեայ ժամանակով, ապա գառնալով Կեսարիայից կատարեց նրանց հանդիսաւոր մկրտութիւնը, և Տրդատին Յովհաննէս կոչեց աւազանի անունով։

Հայ մատենագիրները գեղեցիկ ձևով կը նկարագրեն այդ հանդիսաւոր մկրտութիւնը և կատարուած հրաշքի մասին։ Նշանակուած պահքի լրանալուց յետոյ.- Գրում է Լամբրոնացին.

Իսկ ի լցուլն կիսի եղելոյ պահոցն կատարելոց առնալ Սուրբն Գրիգորի զաւխարհականն զօրացն և իսկն Թագաւորն, և զկին նորա զԱէխէն, և զմնն օրիորդն Խոսրովիդուխտ և մնծամնծան ամենայն, և զամենայն մարդկան բանակին հանդերձ, և առնալ ընդ այգոյն առաւօտուն լուսանալոյ յափն Եփրատ գետոյն մատուցանէր, և անդէն մկրտէր առ հասարակ զամենեսեան յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ (Լամբրոնացին տարուանակում է ճկարագրել մկրտութեան հրաշալի տեսարանը).- և իբրեւ իջանէին մարդիկն ամենայն և թագաւորի ի մկրտութիւն անդ ի ջուրսն Եփրատ գետոյն, նեան սմանչելի երևեալ յԱստուծոյ զի տեղի առնալ ջուր գետոյն, անդրէն դարձան ընդ կրուանկ, և լոյս սաստիկ երևեալ ի ճմանութիւն սեան լուսաւորի և եկեալ ի վերայ ջուրց գետոյն, և ի վերայ նորա ճմանութիւն տերունական խաչին։ Եւ այնչափ ծագեալ ըզլոյսն մինչեւ արգելոյր նառագայթս արեգականն, և երջան առնալ ի մէջ գետոյն տուրջ. մարդկամբն խաղար։ Լամբրոնացի Մենեռ. խարհդ. էջ-307։

Սուրբ Գրիգորն աշխարհաքանական գործն առնելով, բոլոր մեծամեծների և բազմութեան հետ միասին Եփրատի ափը բերեց առաւօտեան կողմ և կատարեց մկրտութիւնը բոլոր ժողովրդին հաւատարպէս։ Մկրտութեան պահուն կատարուած հրաշքի մասին Լամբրոնացին այսպէս կը շարունակէ. ԵԲԷ Բազաւորն ժողովուրդը մկրտելու համար Եփրատի ջուրը կը մտնէին աքանչելի նշան երեւաց ջուրի մէջ, և Տիրոջ խաչի նմանութեան լոյս յայտնեց, այնքան փայլեց այդ լոյսը, որ մինչև անգամ նւազեցնում էր արեգակի ճառագայթները, Եւ օձելու իւղը, որ Լուսաւորիչը հեզում էր ջրի մէջ նրանց վրայ, շրջան առնելով կը խայտար մարգկանց շուրջ։ Լամբրոնացի Մեկնութ. Խորհ. էջ. 307։

Լամբրոնացին յիշատակում է նաև լուսափայլ զգեստների, փառաւոր հանդերձների՝ լուսաւոր ջահերի և սաղմոսերգուների համար. Թէ ինչպէս մտեցան որդեգրութեան այս խորհրդաւոր արարողութեանը։ «Այնտեղից ելնելով մեծ ցնծութեամբ, սպիտակ զգեստներով, սաղմոս երգելով վառուած ջահերով և խորհրդաւոր լրջութեամբ ու զւարթութեամբ, հրեշտակի կերպով լուսաւորուած, Աստծոյ որդեգրութեան անուն առնելով մտան սուրբ Աւետարանի ժառանգութեան

մէջ և նրանց վիճակեց խառնելու սուրբերին։ Լամբրոնացի Մեկն. Խորհ. էջ. 307-508։

Մագիեցու քրիստոնէութիւնը չորրորդ դարում հայոց մէջ Լուսաւորիչ Հայրապետի ձեռքով, Աւետարանի ուսուցումը ժողովրդին սովորեցնելու և եկեղեցու խորհուրդները տեղին մատակարարելու համար բազմաթիւ հովիւներ կարգեց, նաև ուղարկեց երկրի զանազան կողմերը, որոնք մկրտում էին մանուկներին ու չափահասներին և գարձի բերում հեթանոս ժողովրդին։ Ըստ Եզեկէլի - Եւ արասցէք ձեզ սիրտ նոր և հոգի նոր, որք եկայք դարձուք և կեցէք. Ի. Եզեկիէլ. Ժ. 31 32.

Եկեղեցու խորհուրդները հաստատեցին չորրորդ դարում, ապա յետագայում այս ուղղափառ սկզբունքները մոլար ազանդաւորների քարոզութիւններից անփոփոխ և հաստատ պահելու համար սուրբ հայրապետները յօրինեցին կանոնները, ծիսակատարութեան արարողութիւնները, խորհուրդներին առնչող հոգերուխ շարականները ու աղօթքները, որոնց ազդեցութեան ներքոյ հայ ժողովուրդը սերտ կապով կապուել է իր ազգային եկեղեցուն և աւանդութիւններին ու պահում է որպէս սեփական ժառանգութիւն։

Գեռևս վաղ ժամանակներից սկսած մեր ե-

կեղեցու և գաւառանքի հանդէպ եղել են ընդհարումներ հերձուածող ազանդաւորների կողմից, որոնք ջանացել են իրենց մոլար վարդապետութեամբ հերձումներ առաջացնել հայոց մէջ, սակայն ամէն անգամ հանդիպել են աստուածաշնչի հայրերի բուռն դիմադրութեան և անհետացել։ Տեղին է բերելու այս փոքրիկ օրինակը. Մխիթար Քոնեցի օրով, նրա աշակերտները համարձակութիւն գտան լատինացուց սովորութիւնը մացնելու հայոց մէջ. ընդունելու համար կրկնամըկրտութիւնը և գրոշմը։ Ապա Յովհաննէս Որոնեցու աշակերտ Մոգաքեայ վարդապետը, որ առաջ բարեկամ էր Ունիթոռների հետ*), և երբ տեսաւ նրանց անկարգութիւնը, կրկին մկրտութիւն ուսանելը, սաստիկ թշնամացաւ նրանց հետ և պատժագրեց արաւ նրանց գլխաւորներին, ըստ Սրբազան Առաքելի. «Մի է Տէր, մի է հաւատք և մի է մկրտութիւն»։ Այն անձը, որ մկրտուեց Յիսուս Քրիստոսի անունով՝ արդէն քրիստոնեայ ճանաչուեց, սակայն յարանուանական գաւառանքների մէջ ագիտութեան հետևանքով առաջացած հակառակութիւնները այն ստիճան կուրացրին եկեղեցիների պաշտօնեաները, որ նախագիրքի համար նորից էին կատարում մկրտութիւնը։ Առաքելոց Թուղթերի մէջ գրում է, «Վասն զի անկարելի է նրանց, որ մէկ անգամ լուսաւորուած, և այն երկնաւոր պարգևի համն առած և Սուրբ Հոգւոյ մասնակից եղած ... եթէ կործանում են և նրանք դարձեալ նորոգելն ապաշխարութեան համար. որովհետև Աստծոյ Որդուն նրանց համար կրկին խաչեցին և խայտառակ արին» Եբրայեցս Զ. 4-6։ Դեռ ևս կատարուում են նման սովորութիւններ տարբեր գաւառանքների մէջ, հակառակ Սրբազան առաքելի պատուէրի։ Ահա թէ ինչ են սերմանում այս և նման ազանդաւորները, որոնք անպտուղ են ծնում հայոց հաւատքի անդաստանի մէջ։

Վաղ ժամանակներում հայոց մէջ մկրտութիւնը կատարուում էր Զատկի նուակատիքի և Պենտեկոստէի տօներին, այն հետևումով, որ այդ օրերին Սուրբ Հոգին իջաւ առաքելների վրայ, սակայն գաւառներում կատարուում էին Յինանց օրերին սովորաբար տաճարների գաւիթներում, որ գրուում էր մկրտութեան աւազանը։

Հետագայ դարերում, ըստ ժամանակի պահանջի մկրտութիւնը թոյլատրեց ազատօրէն կատարելու ամենուրեք, բացի որոշ արգելքների՝ այն էլ մի շարք տօների առիթով։

*) Տես Դերենիկ Եպիսկոպոսի Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Խորհուրդները, էջ 15։

Իրարու յաջորդող ազգային ժողովներում եկեղեցու խորհուրդների շուրջ եղել են բազմակողմանի հակաճառութիւններ, որոնք անհնար է գրի առնել ուղղակի էջերով. սակայն տեղին է արժէքաւորելու մեր երջանկայիշատակ սուրբերի անձնուէր գործերը, որոնք իրենց ամուր կեցուածքով հայ ժողովրդի խռովայոյզ պայմաններում, կեանքի գնով պահել ու յաջորդող սերունդին են աւանդել Սրբազան Առաքեալներից թողնուած այս ասուածառաք խորհրդները։

Թէև անցնող դարերի գաղթականութեան և տարբեր իշխանութիւնների ճնշման հետևանքով զանազան ազգերի մէջ ապրող հայը նրանց սովորութիւնները իւրացրել ու որոշ օտարաձև յաւելումներով ազգատուներ է տեղի ունեցել ընտանեկան բարքերի ու ծիսակատարութիւնների մէջ, սակայն խոնարհաբար հետևել է ու կատարել իր պարտականութիւնը Հայաստանեայց Եկեղեցու խորհդների հանդէպ, իր յարկի տակ է առել զաւակներին օրհնուած Սուրբ պսակով և օծուած Ս. Միւռոնով։ Այսքանով փակում եմ նախաշրջաններում սկիզբ առած և կատարուած երեւոյթները մկրտութեան շուրջ, հայ կեանքի շրջապատէն ներս։

ՆԵՐԵԼԻ ԵՒ ԱՐԳԵԼԵԱԼ ՊՈՑՄԱՆՆԵՐԸ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅՈՑ ԿԱՆՈՆԱԳՐԵՐԻՑ

Կանոնները եկեղեցու խորհուրդների կատարման մէջ ճշգրիտ ուղղութիւններ են տալիս և խստօրէն արգելում են այն երեւոյթները, որոնք խաթարում են ազգի և եկեղեցու իրաւունքները։ Մկրտութիւն էլ կատարում է հայ եկեղեցու կանոնագրի վրայով։ Կանոնները արգելում են յարաւանական գաւանանքների բանիւ և գործով միջամտութիւնները խորհրդակատարութիւնների մէջ, թէև կան բազում օրինակներ, սակայն տողերիս մէջ եմ առնում մի քանի կարեւոր կէտերը, որոնց գիշումը հանդուրժելի չէ օրինակատար հոգեւորականի համար եկեղեցու շրջապատէն ներս։ Այսպէս օրինակ՝ ովքեր կարող են մկրտութիւն կատարել, ինչ անձինք կարող են կնքահայր կարգուել և ինչ է հարկաւոր զուտ հայկականով վաւերականօրէն կատարել մկրտութիւնը։ Հայոց եկեղեցու մէջ մկրտութիւն կատարողը պէտք է կարգաւոր եկեղեցական լինի, այսինքը քահանայ կամ եպիսկոպոս, ուստի սարկաւագին իրաւունք տրուած չէ խորհուրդ կատարելու։ Ս. Սահակ Հայրապետի կանոնագրութիւնը

այդ առթիւ յայտնում է «Եւ սարկաւագք մը-կըրտուքիւն մի իշխեսցեն առնել, ապա թէ ա-բասցեն լուծեալ լիցին ի սարկաւագութենէ՝ հանդերձ պատուհասիւ, զի ոչ է սարկաւագն քա-հանայ, այլ սպասաւոր քահանայի»։ Կանոն Ժ. Նոյնը կը հրահանգէ նաեւ Դուինի Բ. ժողովին ԺԷ. կանոնը, նոյնպէս եւ Պարտաւի Ի. կանոնը. Տես Դերենիկ Եպիսկոպոսի Հայաստանեայց Ա-ռաքելական Սուրբ եկեղեցւոյ Խարհուրդները, էջ 12-13։

Անհրաժեշտ*) համարեցի այդ լուսաբանու-թիւնը առնել ոյն գրքոյկի մէջ, որը անգրա-գառնում է նաեւ չմկրտուած և մահացած երեխա-ների համար. ըստ Պարտաւի Ի. Կանոնի Նոյն-

*) Չմկրտուած եւ մահացած երեխայի մասին այսպէս կը գրէ Սիոն Կաթողիկոսը իր կանոնի մէջ. ժողո-վրդական ոմ, որ յաղագս պէս պէս ինչ սխալական-ացս բանադրեալ լինի յեպիսկոպոսին, թէ մեռեալ թող չթաղէ զնա քահանայ, եւ ոչ երեխան մկրտել, ապա թէ դէպ լիցի երեխային հասանել այսպիսոյն մեռա-նելոյ, քահանան մկրտեսցէ զերեխայն եւ թաղեսցէ զմեռեալն, եւ այլ կապանս բանի պնդութեամբ անլոյծ պահեսցէ, եւ եթէ դէպ լիցի երեխային մեռա-նել յորժամ եկեսցէ քահանան, կճեսցէ սուրբ նեռա-նաւ զգլուխն եւ թաղեսցէ ընդ Քրիստոսի մկրտեալսն։ Սիոն կաթողիկոսի (ՁԺԲ) ԺԲ. կանոն։

իսկ եթէ երեխան մահամերձ լինի, բացի քահա-նայից ուրիշը իրաւունք չունի խորհուրդ կատա-րելու, իսկ մի՛ւս կողմից էլ պատիրում է, ոչ թէ միայն չափահաս մէկը, որ մկրտելու ջերմ փափագ ունի կը փրկի՝ այլ թէ երբ իր փափա-գը չիրագործուած մահանայ, այլ նաեւ երեխա-ները իրենց ծնողներին գիրենց մկրտել տալու անկեղծ փափագի և գիտաւորութեան շնորհիւ կը-փրկուին, հոգ չէ թէ ակամայօրէն մկրտելուց առաջ կը մեռնին։ Միայն թէ որպէսզի եկեղեցական թաղում կարելի լինի, այդ գիտաւորութիւնը իրապէս պէտք է յայտնեն քահանային։ Հասա-կաւոր մի երեխայ, եթէ փափագում է մկրտել-լու, բայց իր կամքից անկախ պատճառներով չի յաջողւի նրա մկրտելը և մահանայ, իր փափա-գի համաձայն մկրտուած կը սեպւի և կարելի է նրա վրայ թաղման կարգ կատարել։ Պատերազմի ժամանակ բոլոր երեխաները, որոնք հակառակ իրենց փափագին չեն կարողացել մկրտուել, նրանց մեղքերը ներւում են իրենց մարտիրոսական մահով ... Տես Կանոն Ա թանասի Ձ։

Սակայն Դերենիկ Եպիսկոպոսը այս աշխա-տութեան 14 էջում ըստ հայրապետական կանոնի՝ գրում է, երբ երեխան մահանայ առանց մկրտելու նրա վրան թաղման կարգ չի

կատարի, որովհետև Սուրբ Հոգի չէ ստացած և եկեղեցւոյ մարմին և անդամ չէ եղած, քանզի ի կեանս իւրում չեղև արժանի կենդանարար շնորհին։ Երուսաղէմ, Ձեռագիր Թիւ 2911, էջ 480 Դերենիկ Եպիսկ. Հայ Առաք. Ս. Եկեկց. Խորհ. էջ 14։

Մակարայ առաջնորդի կանոնների մէջ ևս արգելում է սարկաւագի մկրտութիւն կատարելը, որ գրում է հարց և պատասխանի ձևով։ Հարց. Արժան իցէ սարկաւագաց մկրտութիւն առնել, և կատարեալ իցէ խորհուրդ։ Պատասխանում է Թէ-Գիտութիւն լիցի քրիստոսասէր եղբայրութեան ձերոյ, զի եպիսկոպոսաց և քահանայից է իշխանութիւնս այս, և սարկաւագաց զայս առնել ոչ է արժան։ Մակարայ Առաջնորդ (ՌՄԽ) Ա. կանոն։

Մկրտութեան ժամանակ կին մարդը աւազանի մօտ չկենալու համար այսպէս են բերում կանոնները, նաև կնքահայր կարգելու մասին գրում են հետևեալ ձևով։ Քահանայ ի ժամ մկրտութեանն մի իշխեսցէ կին մարդ ի սուրբ աւազանն Բազուլ, և մի կնքաւոր կացուցանել զայսահարս և զպաշխարոզս. Կանոն Բարզի Հայրապետի. ՃԺԴ։

1-ին է ինչու Հայրապետը այս կանոնով արգելում է կանանց աւազանին մօտենալը։ Տաթեւացին տալիս է հետևեալ բացատրութիւնը.- Որովհետև հերձուածողները կանանց հրաման էին տալիս մկրտութիւն կատարելու, այս բանը վերանալու համար նրանց մօտենալն մկրտութեան աւազանին արգելեցին։ Քանզի կանայք պատճառ են մարմնական, եւ աղտաւորներ են. եւ կիներն եղաւ օձից խաբուողը։ Տաթեւաց Գիրք Հարցմանց. էջ 145.

Այդ առթիւ Դերենիկ Եպիսկոպոսի Հ. Ա. Ա. եկեղց. Խորհրդները աշխատութեան մէջ Կանոն մկրտութեան 123 ցանկի տակ գրում է. Մկրտութեան ժամանակ կիները չըպէտք է ներկայ լինեն, ինչպէս կինը էրիկ մարդ չի լինի. որովհետև զաւակ կըծնի. նոյնպէս էլ մկրտութեան ժամանակ կնիկ մարդ լինելու չէ. եւ բացեալ զդուռն մըտանեն եկեղեցի երբեմն առաջի արբոյ աւազանին եւ կին բնաւ մի մտցէ յեկեղեցին ի ժամ մկրտութեան զի որպէս այր մարդ ի մարմնաւոր ծննդեան ժամանակն ոչ մտանէ ի տուն ճոյնպէս եւ ոչ ի հոգեւոր ծնունդն չէ պարտ կին մարդոյ մտանել յեկեղեցին. կամ տեսանել զարդանդ աւազանին։ Դերենիկ Եպիսկոպ. էջ 17։

Այս սովորութիւնը պահւում է Իրանահայ

նրոյ շրջաններում, եթէ պատահի որ ծնունդի ժամանակ երիկ մարդ կամ գեռահաս մէկը կամ-կամ անգիտակցօրէն ներս մտնէր ծննդականի սենեակը, ատամոր հրամանով պատառում էին նրա շապիկը. ըստ ժողովրդական զրոյցների, թէ վախեցնում են մանոցին և թէ այդ ձևով լուծում են շոր կապանքը, կին քաւոր չի կարելի լինել, գրում է Տաթևացին... և երաշխաւոր լինել մըկըրտողի համար, զի կնքահայր կասեն և ոչ կնքամայր ինչպէս էր Յովհաննէս կնքահայր Յիսուսի. Տաթևաց Գիրք Հարց. 144 կնքահօր մասին առանձին բաժինով գրել եմ հետագայ էջերում։

Առն ամուսնութեան ծնած կամ օտար ազգի զաւակի մկրտութեան համար Տաթևացին գրում է. «Զաւակն այլ ազգաց մկրտել պարտ է»։ Սակայն անցնող ժամանակների փոփոխութիւնները, ազգի և եկեղեցու իրաւունքների վառնգումը նկատելով, կանոնագիր հայրապետները արգելում են օտար ազգի զաւակի մկրտութիւնը։ Շնորհալին գրում է, «Ասեմք և յազգս զծնունդս այլազգաց մկրտելոյ ... և այլն». Օտար ազգի զաւակի մկրտութեան համար ասեմ. գրում է Շնորհալի Հայրապետը- ինչ որ կրթերի հին ժամանակում սովորութիւնները, որ գէմ էր Քրիստոսի հրամանին, որպէս ասաց թէ չպէտք է արգելել շուներին տալ- և շատ տեղին է չանտեսելու այս պատէրը, վասնզի ինչ օգուտ է նրան ուրիշի բերանով խոստովանելը և մկրտելով քրիստոնեայ դառնալը, երբ անզգայ է և անլեզու, որովհետև երբ հասակով մեծացաւ, դարձեալ կը-մերկանայ, կուրանայ և հայհոյիչ կը դառնայ ասուածային անօրէնութեան խորհրդին, ըստ իրենց օրէնքի փոխանակ փառաբանիչ լինելու։ Շնորհալի Ընդհ. էջ 40։ Մեր օրերում շատ են պատահում նման դէպքեր, որի համար ուշադիր պէտք է լինի օրինակատար հոգեւորականը և չըգիջանէ կանոնը վասն ազգութեան։

Բարդի Հայրապետը իր կանոնի մէջ գրում է, օտարի հետ կարգուածի մկրտելու համար այսպէս- Եթէ անհաւատների մէկը հաւատացեալ կին առնի և ինքը կամաւ ընդունի հաւատքը, նախ պէտք է քննել, իմանալ նրա արտանց հաւատքի դառնալու մասին ապա տալ մկրտութիւն, օծում և կատարել Ս. պսակի օրհնութիւնը։ Կանոն Բարդի Հայրապ.։

Այրը և կինը եթէ անհաւատից լինեն և կամենում են մկրտութիւն ընդունել, քահանան պէտք է ընդունի նրանց առաջարկը, սակայն փորձի, քննի տեսնի եթէ ամուսնացած են չը լու-

ծի նրանց ամուսնությունը, այլ թէ ըստ կարգին կատարի մկրտությունը։ Կանոն Բարոյի Հայրապ. (ԱԿԴ) ԺԼԹ.

Ի՞նչ պայմաններով, ինչ հասակի և ովքեր են կարող կատարել մկրտությունը հայոց կանոնով։ «Երեխայ մի ոք իշխեսցէ պահել առանց կնքոյ Զ. կամ է աւաւր» Կանոն Բարոյի Հայրապետի ՄԼԴ.

Մկրտություն կատարողները պէտք է լինեն վարդապետ կամ քահանայ, ենթակաները կընքահայրն և մկրտող երեխան, լինին չափահաս կամ անչափահաս, չափահասներն իրենց հաւատքով, փոքրիկները ծնողների հաւատքով և կնքահօր երաշխաւորությամբ։ Ապա մկրտելով անխրատիր թէ հասակաւորներին և թէ անչափահասներին։ Գարձ Առաք. ԺԶ. 15 Ա. Կորնթաց. Ա. 16 Կարապետ Շահնազար. Քրիստոնեական հաւատոց 227-228 էջ.

Հայ ժողովուրդը հիմնելով եկեղեցւոյ կանոններին նորածին մանկան միշտ էլ մկրտել է գեռևս փոքր ժամանակից, նա կամենում է երեխան մեռնում մեծանայ իր յարկի տակ, որովհետև չմկրտած երեխան հաւատացեալ ժողովրդի մօտ հեթանոս է համարւում։ Այս սովորությունը պահպանւում է հայ ընտանիքների մէջ ռակայն

եթէ պատահի, որ տեղի և ժամանակի անյաջողությեան պատճառով երեխան մնայ առանց կընքելու ապրել որպէս ԵՐԱՆՅՑ. թէկուզ յառաջացած տարիքի մէջ եղած ժամանակ, գարձեալ կատարւում է մկրտությունը և ընդունում Ս. Միւռոնի օծումը, որովհետև չմկրտած որեէ մի հայ անհատի վրայ չեն կատարի միւս խորհուրդները։

— Եւ Գիտելի է զի չորս արարողութիւն է մկրտութիւն, կասէ Տաթևացին։- Մին՝ որ Ջուրը ջերմ լինի, Երկու՝ որ աւազան Միւռոն հեղուն, Երեք՝ որ լոյս վառեն, Չորս՝ որ խաչ գնեն։ Տաթև. Գիրք Հարցմանց. էջ 157։ Եւ տալիս է հետևեալ բացատրությունը։ Ջուրի տաք լինելը նշանակությունն է սուրբ Հոգւոյ ջերմութեան, որ հեռացնում է մկրտելից ատելությեան պաղությունը և բորբոքում է նրան Քրիստոսի սիրով։ Միւռոնն աւազանի մէջ հասեցնելը։ նմանությունն է Յորդանան իջնող աղաւնակերպ Սուրբ Հոգւոյն, որ աներևոյթաբար իջնում է աւազանի ջրի մէջ։ Լոյս վառելը՝ նշանակում է աւազանին լուսաւորում է նորամկրտելն, և տալիս է այն նշանակությունը, որ Տէր Յիսուս Քրիստոսը օրհայ մէջ պայծառ արեգակի լոյսի ներքոյ մկրտեցաւ։ Վանդի գիշերայ մէջ Սուրբ Կու-

ից ծնելը մարդկութեան վերաբերող մարմնա-
կան և խաւարային աշխարհի ծնունդն է, ապա և
մկրտութիւնը, որ հոգւոյ ծնունդ է տանում և
դէպի երկնային կեանքի։ Ապա աւազանի մէջ դը-
նելը՝ նշանակում է խաչուած Քրիստոսի մահով
են մկրտում։ Բացի այս չորս կարևոր նիւթերից
ուելացնում է թէ, նարօտը, որ սպիտակ և կար-
միր թելերից է պատրաստւում նորամկրտուածի
պարանոցին կապելու համար, նշանակութիւնն է
խաչուած Յիսուսի կողից բխող ջրի և արեան,
սպիտակեղէնը մարմնաւոր մաքրութեան և երկու
յայս վառելը նշանակում է թէ մարմնով և թէ
հոգով լուսաւորուեցաւ։

Այս սովորութիւնները որոշ փոփոխութիւն-
ներով պահպանւում են Իրանահայ գաղութնե-
րում, յաւելումներով և կրճատելով։ Նորամը-
կրտուածներին սպիտակեղէն հագցնելու համար
պէտք է ասեմ, որ տարիներ առաջ ինչպէս այժմ
էլ գաւառաբնակ հայերը սովորութիւն ունեն ե-
կեղեցիներում պահելու սպիտակ կտորից կարուած
(վեղարաձև) կնգուղ, որ նորամկրտուածների գը-
լուխներին էին հագցնում մկրտութիւնից անմի-
ջապէս յետոյ, երբ կնքահայրը եկեղեցուց տուն
էր բերում մանկան, սակայն այժմ նորամկրտ-
ուածներին մեծամասնութեամբ հագցնում են սպի-

տակ հանգերձներ, իսկ տաւան գցելու սովորու-
թիւնը ամէն տեղ մնում է անփոփոխ։ Ըստ Գրը-
նայ Ե. Ժողովի ԺԳ. Կանոնի՝ Մկրտութիւնը պէտք
է վիմակերտ աւազանի մէջ կատարել. սակայն
թուլատրւում է կատարելու ոչ աւազանի մէջ և
եկեղեցուց դուրս այն պարագայում միայն, երբ
երեխան հիւանդ լինի, կամ թէ մօտիկ եկեղեցի
չլինի։- Ոչ է պատշաճ զաւազանն յայլ իմն ճիւրոյ պատրաստել եւ կամ ուրացեալ եւ կամնա-
ցի, այլ աւազան քարեղէն հատատել ի նմին
իսկ յեկեղեցւոջն։- ԺԳ. Կանոն. Ե. ժողովոյ
Դուինայ։

Նոյն բովանդակութեամբ Մակարայ Առաջ-
նորդի (ՌՄՄԼ) Բ. Կանոնի մէջ գրում է. Եթէ
մկրտութիւն կատարելու համար օծուած աւազան
չի լինում, կամ մօտիկ չէ Աստծոյ եկեղեցուն,
թող ամանի մէջ կատարեն մկրտութիւնը առանց
մեղադրելու ըստ կարիքի, սակայն եթէ կայ ե-
կեղեցի, պարտ է քերել մանկատուն և մկրտել
օծուած աւազանի մէջ. ովքեր, որ դէպի բարե-
պաշտութիւն և հաւատք են գառնում, իսկ եթէ
մկրտող մանուկը հիւանդ է լինում, որ ոչ մօ-
տիկ եկեղեցի կամ կարգաւոր աւազան կայ, եթէ
կամենում են մկրտել չըպէտք է արգելել, այլ
պէտք է առանց կարգաւոր աւազանի մկրտել, վա-

ոչնգի մկրտութիւն չըկատարելու գէպքում պարտական չլինէք նրա փրկութեանը։ Որովհետև Սուրբ Հոգին մարդոցին է շնորհ տալիս և ամանով մկրտելը արգելք չի լինի։ Բ. Կանոն Մակարայ Առաջնորդ։ Թէ ինչու է մկրտութեան աւազանը եկեղեցու աջակողմեան գտնում լինում և Ինչ է անդրանիկ ծնելու խորհուրդը։ Տարեացին բերում է հետեւեալ բացատրութիւնը, «Աւետարանից է գալիս այս խօսքը։ Մնաս զորդին զիւր զանդրանիկ-զի միշտ անդրանիկ ծնանիմք և ոչ կրրտեր. զի պատկեր Քրիստոսի ստանամք, որ է անդրանիկ հօր, զի միշտ որդի ծնանիմք Աստուծոյ և ոչ ուստր և ոչ էգ, զի ի Քրիստոս Յիսուս արու և էգ ոչ է, ասէ առաքեալն, և զայս ցուցանէ ի յաւազանն յաջակողմն եկեղեցւոյ։» Տարեացի. Գիրք Հարցմանց, էջ 590։

Բարգմ. Որովհետև միշտ անդրանիկ ենք ծնւում և ոչ թէ կրտեր, վասնզի մեծ հօր պատկերի նմանութիւնն ենք ստանում, ինչպէս որ Քրիստոսի պատկերն է, քանզի որդիք ենք ծընւում, և ոչ թէ արու կամ էգ, քանի որ Քրիստոսով ծնւելը, ինչպէս Առաքեալն է ասում՝ արու և էգ չունի, այս է նշանակութիւնը, որ աւազանը գտնւում է եկեղեցու աջակողմեան գտնում կամ ատանգատանում։

Մաշտոցների մէջ էլ առանձնացած արարողութիւն չկայ ազատի, ծառայի. արուի և իգի համար, և ոչ էլ հեթանոսի, ինչպէս Գօղոս Առաքեալը կըգրէ։- Զիք խտիր. ոչ հրէից, և ոչ հեթանոսի. ոչ ծառայի և ոչ ազատի. ոչ արուի և իգի. զի ամենեքեան գուք մի էք ի Քրիստոս Յիսուս . . . Գաղատացւոց Գ. 4։

Մկրտութեան մաշտոցներում յիշեալ կանոնների վրայով է գտնւում խորհրդակատարութեան արարողութիւնները, եկեղեցու կանոնից դուրս նրանց վրայ յաղճատումներով ուելանում են ժողովրդի աւանդութիւններն ու նորաձև սովորութիւնները, կողմնակի յաւելումներով, սակայն օրէնգիրը սուրբ հայրապետների ստուգաշնորհ գործը կը մնայ անփոփոխ և արիւն ուուիշ կը դառնայ հաւատքի մէջ պահելու համար հայ ժողովրդի աշխարհացրիւ զաւակներին։

ՄԱՇՏՈՑ ԿԱՆՈՆՈՎ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ (Տպագրուած 1843 թուին Երուսաղէմ).

Մեր ձեռքը հասած Երուսաղէմում լոյս տեսած մկրտութեան այս ծիսարանը տարբերւում է միւս բոլոր Մաշտոցներից, մանաւանդ կնքահօր խոստովանութիւնը քահանայի կողմից՝ որը կատարւում է հարց և պատասխանի ձևով. ստորև գրի ենք առնում որոշ մէջբերումներ յիշեալ

Մաշտոցից աչքի ընկնող աղաղոշություններ և խրատական հատվածներ։

«Եւ ապա գարձուցանէ յարևմուտս ձեացուցեալ զձեռն հրաժարական քահանայն և կնքահայրն. երեխայն կնքահայրն ի ձախակողմն եկեղեցւոյն և քահանայն յաջակողմն, և երգմեցուցանէ երիցս անգամ ասելով այսպէս».

Քահանան հարցնում է կնքահորն-Հրաժարիս ի սատանայէ և ամենայն խաբէութեանց նորա, և ի պաշտպանէ նորա, և ի գնացից նորա, և ի հրեշտակաց նորա, և ի կամարարաց նորա։

Եւ Գ. անգամ ասէ երեխան.- Հրաժարեմ. Եւ գարձեալ քահանայն հարցանէ զերեխայն,

Քհնյ.— Հրաժարիս.
Եր.— Հրաժարեմ։
Քհ.— Հրաժարիս.
Եր.— Հրաժարեմ։
Քհ.— Հրաժարելով հրաժարիս.
Եր.— Հրաժարելով հրաժարեմ։

Ապա քահանայն գարձուցանէ յարևելս և ասէ.— գարձիր ի լոյս Աստուած գիտութեան։ Մաշտոցներում չեմ հանդիպել այս պատերին՝ որ պէտք է որ կողմը կանգնեն քաւորը կամ քահանան, սակայն այստեղ պատիրում է գէպի ա-

րևմուտք գարձած ժամանակ կնքահայրը և երեխան եկեղեցու և քահանայի ձախ կողմ կենան, ապա գէպի արևելք գարձած պահուն կնքահայրը և երեխան քահանայի աջ կողմում կենան, որ լինի աւազանի կողմը։ Տարբերւում է նաև այս կարճ հատվածքի քառերը միւս մաշտոցներից որ կարդում են երեխան- «Երբ մեծ է լինում» կամ կնքահայրը. որից յետոյ նորէն քահանան հարց ու պատասխանի ձևով գառնում է գէպի կնքահայրը։ Շատ պարզ ձևով, հարցնում է.- Քհնյ. Հաւատամ. Երեխան- Բէ- Հաւատամ։ Քհնյ. -Հաւատամ-. Եր. Հաւատամ։ Քհնյ. Հաւատով հաւատամ. Եր. Հաւատով հաւատամ։ Կրկին հարցնում է- Հաւատամ ի Հայր. Երեխ.- Հաւատամ. Քհնյ.- Հաւատամ յՈրդին. Եր. Հաւատամ. Քհ.- Հաւատամ Սուրբ Հոգին Եր. Հաւատամ. Երեխան -կամ քաւորը հերթաբար պատասխանում է այս հարցերին։ Մինչդեռ բոլոր Մաշտոցներում այս ամենի տեղ կարդացւում է միայն-Հրաժարիմք ի սատանայէ ... Եւ այլն։ Եւ գէպի արևելք. Հաւատամք յամենասուրբ ... և այլն։

Զենք յիշում աղօթքների ու սաղմոսների մասին, որը նոյնպէս տարբերում է այլ ծիսարաններից, սակայն երևում են որոշ աչքի ընկնող աղաղոշիաներ ձևեր, որոնք անհրաժեշտ համա-

բեցի բերել տաղերիս մէջ։ Սոյն Մաշտոցում էս գրուած է, թէ աւազանի մէջ ջուր լցնելուց առաջ խաչը պէտք է գրի ս. աւազանը և աւելացնում է հետեւեալը. Լուցանեն տասն երկու մոմեղէն, ս. խաչով ու ս. միւռոնով կատարեն ջուրի օրհնութիւնը, ապա ջուրից դուրս բերեն խաչը և միւռոնը հեղեն աւազանի ջուրի մէջ։ Դարձեալ տարբերութիւն կայ աւազան գնելուց առաջ քահանայի և կնքահօր հարց ու պատասխանի մէջ այս ձեւով. Քհնյ. հարց է տալիս կնքահօրը կամ երեխային- Զի՞նչ խնդրես. Երեխան պատասխանում է՝- Խնդրեմ մկրտիլ։ Քհնյ. Արդարև խնդրե՞ս. Երեխան թէ՝ Հաւատով խնդրեմ մկրտիլ և մաքրիլ ի մեղաց՝ և ազատիլ ի գիւաց՝ և ծառայել Աստուծոյ։ Տէր Մարգարեան Մաշտոցներում գրածը որոշ նմանութիւն ունի այս մաշտոցի արարողութեան. այսպէս, Քահանան հարցնում է՝ -Զի՞նչ խնդրես, կնքահայրը պատասխանում է, խընդրեմ մկրտիլ. մաքրիլ ի մեղաց ազատիլ ի գիւաց և ծառայիլ Աստծոյ։ Սակայն բոլոր ծիսարաններում գրած է. Երեխայս զի՞նչ խնդրէ, կնքահայրը պատասխանում է, Ցոյս, Սէր և Մըկրտութիւն։ Մկրտիլ և արդարանալ, սրբիլ ի մեղաց, ազատիլ ի գիւաց, ծառայիլ Աստծոյ, ելեք անգամ կրկնելով։ Եւ քահանայն կասէ- Ըստ

հաւատաց քոց եղիցի քեզ։ Սոյն Մաշտոցում, երեխային աւազանի մէջ դնելու ժամանակ գրում է «Այս անուն ծառայս Աստուծոյ, եկեալ երեխայութենէ ի մկրտութիւն, մկրտի յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ» և այլն։ Սակայն այլ մաշտոցներում գրած է- այս անուն-ծառայ Աստուծոյ եկեալ կամաւ յերեխայութիւն, երեխայութենէ ի մկրտութիւն մկրտի այժմ ի ձեռամ, ապա միանման են շարունակութիւնը։ Բացի յաւել շարականներից ու աղօթքներից. ինչպէս որոշ մաշտոցներում կարդացւում է աւազանի մօտ երեխային ջուրի մէջ լոգացնելիս։ Տարբերութիւն կայ գրոշմելու ասածքների մէջ. օրինակ՝ կնքեմ զքեզ նշանաւ սուրբ խաչիս. և գրոշմեմ փրկագործ սուրբ միւռոնաւս յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։- քահանայի այս ասածքը միւս ծիսարաններում չկայ, այլ թէ, գրոշմելու տեղն գրած է Իւղ անուշ՝ յանուն . . . և այլն։

Տաթեւացին այդ առթիւ տալիս է որոշ բացատրութիւն. Գիրք Հարցման մէջ.-Զի ազգն Ֆրանկաց այլայլելով ասում են. «Ես կըմկրտեմ զքեզ յանուն Հօր և Որդւոյ . . .» Այս ձեը նշանակում է, որ մկրտողին քանութեամբ են մկրտում և ոչ ազատ կամքով, որովհետև ասում

են «Եւ կրմկրտեմ», ԿԸ ՄԿՐՏԵՄ-նշանակում է մը-
կրտուողին իր կամքով չեն մկրտում այլ բըռ-
նութեամբ։ Սակայն այսպէս է հայկական ձեր,-
Այս անուն-ծառայ Աստուծոյ գնեալ արեամբ
Քրիստոսի. Եկեալ յերեխայութենէ ի մկրտու-
թիւն, մկրտի այժմ ի ձեռս իմ անուն Հօր և Որդ-
ւոյ Եւ Հոգւոյն Սրբոյ։ Սակայն մաշտոցների զա-
նազանութիւնը երբէք չի փոխում խորհրդի էու-
թիւնը, որոնք պատրաստելիս զանազան առիթ-
ներով աղճատուել են իրարից ըստ տեղի և հանգա-
մանքների։ Վերոյիշեալ. ՄԱՇՏՈՑ ԿԱՆՈՆՈՎ ՄԸ-
ԿԸՐՏՈՒԹԵԱՆ - Որը սոյն հատուածի խորագիրն է
կազմում, Նախաբանի բաժնում երկու փոքր
մասերով,- ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ - Եւ - Ցաւելուած-
վերնագրերով, գրում է որպէս խրատական, ա-
զատագրած արարողութեան առթիւ. որը գրի ենք
առնում առաջ.

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հոգեշնորհ Եղնկացի Գէորգ շնորհազարդ վար-
դապետ, ծաղկեալ յամի տեառն 1403, այսինքն
չորս հարիւր քառասուն ամօք յառաջ. վասն այ-
լայլութեան եղանակի մկրտութեան, գրէ պաշ-
տօնէից Աստուածուսոյց բաւական բանս խրատա-
կան, համաձայն վերնագրի գրութեան ընտիր

մաշտոցաց, և արարողութեան եկեղեցւոյ մերոյ։
Ցորմէ քաղելով եդաք ասի ի տեղի յառաջաբա-
նութեան. որով յայտնի առնէ, երբ մեք յանձնէ
ինչ ոչ արարաք. այլ ըստ ընտիր ձեռագիր մաշ-
տոցաց. և ըստ արարողութեան կաթողիկէ Առաքե-
լական Եկեղեցւոյ Հայաստանեայց, տպագրեցաք
զհարկաւոր կանոն մկրտութեան, առ ի ուղղել զե-
զանակ նորա ըստ անուայթաք ուղիղ կարգադրու-
թեան արքազան Հայրապետաց նախնեաց մերոց։

Զկնի ապօթից. ասէ երանելին. առեալ զե-
րեխայն, դնէ աւազանի, ի մէջ սուրբ ջրոյն.
խնդրելով զանուն երեխային. և ասէ, այս անուն
ծառայ Յիսուսի Քրիստոսի եկեալ կամաւ յերե-
խայութիւն, յերեխայութենէ ի մկրտութիւն,
մկրտի այժմ ի ձեռս իմ, յանուն Հօր, և մի ապ
ջուր, արկցէ ի գագաթ նոր ընծային։ Եւ Որդւոյ
և մի ապ ջուր յանուն Հոգւոյն Սրբոյ և մի
ապ ջուր արկցէ ի գագաթ երեխային։ Այս է
էութիւն մկրտութեան յորում արասցէ քա-
հանան հոգաբարձութեամբ։ Զի երեք ապ ջուր
արկանելն, անուն երրորդութեան ի միասին
վճարի։ Յետ այնորիկ ընկղմէ ի ջուրս աւա-
զանին երիցս անգամ, և ասէ երեք անգամ։
«Գնեալ արեամբն Քրիստոսի, ի ծառայութենէ
մեզաց, ընդունիլ ազատութիւն որդեգրութեան

մեծին Աստուծոյ Հօր լինել ժառանգակից Քրիստոսի, և տաճար Հոգւոյն Սրբոյ, որ նշանակէ զերկնքօրեայ Թագուհի Քրիստոսի, որպէս ասէ առաքեալն. «Ի մահ անդր նորա մօտեցայք, Թագեալք ընդ նմին ի մահս»։ Այլ զի են սմանք, որք արկանեն զմի ափ ջուր ի վերայ գագաթան աղային, և ասեն զանուն երրորդութեան, և միւս երկու ափ ջրին, որիշ որիշ կրկնեն ասելով, թէ՝ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ըստ այսմ ինն յիշեալ լինին անձինք, և ոչ երեք, և այս ոչ է ուղիղ. զի ի կանոնական հրամանի նզովիւք փակեալ է այնպիսի ասացողն Քրիստոսի այսպէս հրամայեաց մկրտել աշակերտաց. յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Գիտասջիք զի սմանք գլխի վայր ընկղմեն զաղային ի ջուրն անգիտաբար, զի այն Արիոսի արարողութիւն է, ցուցանէ թէ մկրտութեամբն Քրիստոսի ոչ կանգնեցաւ քնութիւնս, ի կործանմանէ մեզաց։ Նոքէն աւելացուսմ է հետեւեալը.

ՅԱՒԵԼԻԱՍ

Զայս խրատս ոչ երբէ յանձնէ իւրմէ և ըստ քմած արարեալ է սուրբ վարդապետն. այլ ըստ ձեռագիր ընտիր վաւերական մաշտոցաց մերոց՝ զոր նախնի Սրբազան Հայրապետքն մեր կարգադրեալ են, միօրինակ են. միայն թէ կարգադրութիւն ապզմոսաց ունին յետ և առաջութիւն, և խորագիրք խրատականք այլ և այլ ազգատեալք, սմանց լիակատար է և սմանց կրճատեալ ի գրչագրաց ըստ պիտոյից տխորժանաց օրինակեալ։ Քանզի պաշտօնեայ քահանայքս մկրտութեան ըստ մեծի մասին ի ձայն ուսանին, վասն այնորիկ սմանք անփոյթ արարեալ են գկատարեալ խրատս գրել։ Սոյնպէս և ապագրիչք, և սրբագրիչք չուենենալով ի ձեռս զընտիր հնագոյն մաշտոցս վասն այնորիկ այլայլեալ է եղանակ մկրտութեան, զոր այժմ բաղդատելով զբազմաթիւ ձեռագիր մաշտոցս, փոյթ կալաք, միայն զկարգ մկրտութեան առ այժմ ապագրել, որ է կարի հարկաւոր. և ձրի բաշխել մկրտիչ քահանայից որպէս զի մի օրինակ լինիցի եղանակ մկրտութեան. ըստ կարգադրութեան նախնեաց մերոց յազգի մերում։

Ապա ապաչեմք, խոնարհիլ առ միմեանս պաշտօնէից՝ և ուսանել և մի արհամարհել, թէ ես այսպէս ուսեալ եմ. կամ թէ այս ինչ և այն ինչ, ապագիր մաշտոցք. այսպէս և այնպէս ունին զայս եղանակ կարգադրութեան։ Այս այժմ չնորէ ժամանակն զամենեցուն զպատճառն մերձ գնել և բացատրել։ Այլ յուսամք շնորհ գտանել առա-

Չի ողջամիտ ուսուցմական ընթերցողաց. որով լուսաւորեալ են միաք գիտութեամբ ուրբ գրոց։

Սրբոյ Երուսաղէմի Պատրիարք
Զաքարիա Արքեպիսկոպոս։

ԱՆՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս աշխատութեան մէջ մի փոքր ևս դադնում եմ խօսելու մեր նորակազմ ու երիտասարդ ընտանիքների հետ, իրենց նորածին զաւակներին օտար անունով կոչելու առիթով։ Աշխարհի մէջ ապրող ցեղերը, տոհմական ազգ և ընտանիքները ճանաչւում են անուններով իրենց ազգին պատկանող իւրայատուկ բարբառով ու նշանակութեամբ։

Հայ ժողովուրդն էլ իր անունը ժառանգել է Բաբելոնից եկող հայոց քաջ նահապետ Հայկի և յաջորդող ազգի հիմնակոչ իշխանների անուններից։ Այդ անուններով կնքւած գեռևս վաղ ժամանակներից հայոց աշխարհի բնութեան հոգն ու ջուրը, որպէս հայ անունների ոսկեայ մատեանը որից փոխանցւում են հերթաբար հայոց զաւակներին և գէպի անմահութիւն առաջնորդում մեր ժողովրդի փառաւոր անունը։ Անցնող դարերի հզօր թշնամիներն իրենց ճնշումներով ու հալածանքներով չկարողացան անջատել մեզ մեր

անուններից, որը ազգային է հանդիսանում հայ ազգի գոյատևման։ Թէև Քրիստոնէութեան կրօնի հետ հայ ժողովրդի մէջ մուտք գործեց եբրայական, հրէական և յունական նոր անուններ, սակայն այդ անուններն էլ նորէն մկրտեցին ազգային հնոցով. ապա հայ լեզուի տարազով ստացան հայկական ձևեր, օրինակ՝ Մարիան դարձաւ Մարէաս, Եահիան՝ Եղիա՝ Իւնան Յովհաննէս, Թոմը՝ Թովմաս, Իսահակը՝ Իսահակ և այլն ... Անուններն էլ իրենց ցեղերի բարբառով ունեն յատուկ ծագում և նշանակութիւն։ Այդ առթիւ շատ գրւածներ կան օրինակներով հայ մատենագիրների կողմից, որոնք ուղղութիւն են տալիս հայ ընտանիքներին, իրենց զաւակներին հայ անունով կնքելու և օտարացնող անուններից խուսափելու համար։ Սակայն ցաւօք որի պիտի ասեմ, որ ընդհանրապէս հայ ներկայ սերունդը շատ քիչ է հետաքրքրւում հայերէնով, հայ գիրքը այսօր մեր ընտանիքների մօտ թանգարանի անօթ է դարձել, և մեր ժողովուրդը կամայ-ակամայ հակւում է գէպի օտարացում ... անունով. ըստ քանասաստեղծի.

..... Մեր հայ անունն այնտեղ հալւում
Մայքէլների հետ է ձուլւում ...

Մեր օրերում, տեսնում ենք թէ ինչպէս օտար անուններով հասանքը մուտք է գործում մեր ընտանիքներէն ներս և հերթաբար գրաւում հայ անուններ տեղը, եթէ շարունակուի այս ցաւալի երևոյթը, կարճ ժամանակից յետոյ կըտեսնենք, որ հայոց ապագան կերտող, հայ անունը պահող սերունդը, ինքն էլ օտարացել է անունով։

Մեր կեանքի ապագան միշտ ներկայէն կըսկըսի, կասէ Ղ. Հայրիկը, նոյնն է պարագան, այսօր անցեալի ապագան է եղել և գալիք ապագան էլ այսօր կստեղծենք։ Ահա թէ ինչ ապագայ են ստեղծում մեր հայ ընտանիքները, որոնք մեր անունը հայ պիտի պահեն։ Բացէք Հայոց եկեղեցիների մկրտութեան անուանացանկը, տեսէք թէ ինչ անուններով են մկրտելու քերում հայ մանուկներին, որոնցից ուղղանն էլ խռովում է։ 4000 տարի ապրող հայը իր իսկութիւնը պահելու համար կեանքը զոհել է, հօր անունը զաւակին տալանգելով, որ վառ պահի իր հայրենի օճախը։ Եւ թէ ինչ են շահում այս օտարացումից այդ էլ թող դատի ուշադիր ընթերցողը, որի ուշադրութեան ենք յանձնում հետևեալ անունները, որ առած ենք մկրտութեան տոմարից ներկայ ծնողների և ապագայ սերունդի։ Սակայն ուզեցի այս ձևով բերել հայոց ծնողների

խղճալի պատկերով այս հանելուկը, որի լուծելը իրենց կը թողնի։ Ահա այսպէս կոչեն ազգերը իրենց ծնունդով և կ'պահեն ցեղի անուններ շղթան։

Աբրահամ ծնաւ զԻսահակ, . . . Դաւիթ ծնաւ զՍողոմոն . . . . և այլն.

Հայկ ծնաւ Արմենակ, Տիգրան ծնաւ Արտաշէս . . . և այլն, բայց այդ վաղ էր։

Սակայն այսօրուայ Հայկերն ու Տիգրանները ծնում են՝ այսպէս. Արտաշէս ծնաւ Քառօլի, Տիգրան ծնաւ Իվէթա, Թորգոմ ծնաւ Քարիա, Մանֆա և Միշէլ, Վարդան տուաւ զՊշիսէն կին իւր և ծնաւ՝ Էգման, Ջուլի, Ջունի և Իսմա. Վազգէն ծնաւ Հիօլէթ, Արամ տուաւ զկին իւր զԱստղիկ և ծնաւ Դորես, Լիւքա և Օժենի, Վազրիկ ծնաւ Լարիս, Կորիւն ծնաւ Լորիս և այլն և այլն։

Կարծեմ քաւական պիտի լինի մեր ուշադիր ընթերցողի համար, գազափար կազմելու գիւրաբեկ ու աննպատակ այսօրուայ մեր անուն մուրացողների մասին, որոնք իրենց ձեռքով հեռացնում են հարազատ ազգի անունները և գերկարաց ու սիրայօժար հայ տունն են հրաւիրում այս անմիտ ու սին անունները պատենական հայ օճախը վառ պահելու, և ժառանգելու Մեսրոպեան փառաւոր մշակոյթին։ Սիրելի հայ ծնողներ, ձեր

գաւառներին հայոց անունով կոչէք, որ վազը Մասիսն իրենց խորթ չթւայ։ Հայոց լեզուով ծանօթ պահէք մեր պատմութեան, որ վազը ապրին ու խօսան Մեսրոպներն ու Վարդանները նրանց հոգում։ Հետևաբար թող գիտենան մեր ժողովուրդը, որ մենք գերի ենք և ոչ թէ մուրացող, հարուստ ենք լեզուով, հարուստ ենք անունով ու մշակոյթով, տարբեր է արևմուտքի ազատամիտ ժողովուրդների սովորութիւնները Հայկազնեանց ցեղի փառաւոր պատմութիւն կերտող ու տակուն ժողովրդից։ Գերի են հայոց Մասիսն ու Անին, սակայն Մասիսն իր փառաւոր գիրքով Մասիս է մնում, Անին էլ Անի . . . Թող ձեր աշխարհալոյծ և տակուն անուններն էլ հայով կենան, Մասիսի պէս։ Տոգերս փակում եմ Բանաստեղծի խօսքերով.

Ու թող այնտեղ Ջեման՝ Ջեմա,
Ասազիկն այստեղ Ասազիկ մնայ . . .

Շիրազ

ՍՈՒՐԲ ՄԻՒՌՈՆ

Միւռոն կամ մեռոն յունարէն բառ է, որ նշանակում է անուշ իւղ, սակայն կրօնական իմաստով մասնաւորապէս այն իւղն է, որ գործ է ածւում եկեղեցւոյ մէջ օծելու համար, քահանաները, եկեղեցիները, մկրտուղ երեխաները և եկեղեցու որոշ անօթները։ Միւռոնի պատրաստելը վերապահւած է միայն Կաթողիկոսին. որից յետոյ յանձնւում է հոգևորականներին գործ ածելու համար եկեղեցիներում, կանոնների համաձայն։ Միւռոնը պատրաստւում է քառասունից աւելի տեսակի նիւթերից, անուշահոտ խնկեղէններից, անուշաբոյր ծաղիկներից, բոյսերից, արմատներից, ծաղկաջրերից և զանազան իւղալի նիւթերից։ Ցիշեալ նիւթերից զատած խառնուրդի հետ խառնում են ընտիր ձիթենու իւղ, այս բոլորի մէջ, ամենից կարևոր խառնուրդը բալասանի իւղն է, որը նոյնանուն ծառի կեղևի տակից ծորող մի անուշահոտ հեղուկ է և Ս. Միւռոն պատրաստելու համար ամենայայտնի նիւթերից մէկն է լինում։

Հայ ժողովուրդը, դարերի ընթացքում, ինչպէս և այժմ էլ խոր հաւատքով ու յարգանքով է մօտենում Ս. Միւռոնին և պաշտում որպէս

սրբութիւն։ Գաւառաբնակ հայերը այնքան են հաւատում միւռոնի սրբութեանը, որ մինչև անգամ եթէ անուրը կենդանին անում գործածելիք սրսէ ամանի մօտեցած կամ լեզու ուած լինէր, այդ ամանը նորէն սրբացնելու և գործ ածելու համար լուանում էին միւռոնաջրով։ Հայ ընտանիքի մէջ սովորութիւն կար միւռոնաջրով ապիտակ հագից շաղախ պատրաստել և չորացնել նման դէպքերում գործածելու համար, այս սովորութիւնը դեռևս պահւում է իրանահայութեան տարբեր շրջաններում։

Հայաստանեայց եկեղեցու կանոնը պատւիրում է, մկրտութիւնից յետոյ ջուրը չթափել անցքերի մէջ, եթէ եկեղեցու աւազանի մէջ չի կատարւում մկրտութիւնը։

— Եւ զջուրը լուացման հանեն արտաքս հեղուն և կոխան և ապականութիւն, այսուհետև մի իշխեսցէ զնոյն անպատուութիւն առնել սուրբ աւազանին, այլ ընդ այլ սրբութիւնս պատով կալցին որպէս սեղանն, և զխաչն վերարկուք ծածկեսցեն և խնկարկութեան պատուեսցեն, և զջուրն անգին ի նմին աւազանին կորուսցեն, և քահանայ, որ անցանէ ըստ այս հրամանս լուծցի։

Թարգմ. լուացման, այսինքը մկրտութեան ջուրը թափում են անցքերի մէջ, սակայն չպէտք

է անպատուութեամբ վարուել Ս. աւազանի հանդէպ, այլ թէ սրբութեամբ պատուել նրան, ինչպէս խաչն ու սեղանը ծածկոցով ծածկում և խունկարկելով պատւում են, աւազանի ջուրն էլ հանեցնում են իր մէջ, նոյնպէս էլ պիտի յարգեն Միւռոնի ջուրը, և այն քահանան որ այս պատուէրը զանց առնի՝ լուծցի քահանայութիւնից։ Կանոն Սիոնի Կաթողիկոս (ՁԸ) Ը—կանոն. պարտաւոր։

Հայ ընտանիքի, հետևաբար իգական սեռի մէջ վաղուց ի վեր մտած է Ս. Միւռոնի պաշտելու գաղափարը, որով սովորութիւն է դարձած երդուելու նրանով, ինչպէս երդւում են Ս. խաչով. օրինակ՝ որևէ յանցանքից արդարանալու համար ասում են,-կանաչ մեռոնը, որ ասա չեմ ասում. կամ-մեռոնը վկայ. և այլն ... Միւռոնի երդումով յաճախ թողնում են քաւորի և ասնիկի կոզմերի մէջ յարուցած ընտանեկան անախորժութիւնները. ի յարգանս Ս. Միւռոնի, որ մեռնուած երեխային գրկով բերել է իրենց յարկի տակ. կանաչ Միւռոնի խաթեր ... ասելով մէջտեղ է գալիս հաշտութիւնը։

Գաւառներում սովորութիւն կար թափորով գիմաւորելու Ս. Միւռոնին, գիւղերը միւռոն բերելիս, առաջուց լուր էին առնում ժողովուր-

գը, ապա մեծից մինչև փոքրը, գործերը ձգած պատրաստվում էին գիմաւորելու միւռոնին գրամական նվէրներով։ Նախապէս պատրաստվում էին գիշերի մուտքից նաև հոգևորական դասը խաչ ու խաչվառով, շարական երգելով ժողովրդի թափորի հետ գալիս մտնում են եկեղեցին։ Ճանապարհին ժողովուրդը խորին յարգանքով ու երկիւղածութեամբ մօտենում և համբուրում են Ս. Միւռոնի սրուակը, որը գեղեցիկ ծածկոցով գտնվում էր հոգևորականի ձեռքում, այս սովորութիւնները պահվում են գեռևս Սպահանի գաւառաքնակ հայերի մէջ։

Ժողովուրդը Միւռոնին ընդառաջ է գնում նաև ս. Ծննդեան տօնին, երբ եկեղեցու ատենդապետից միւռոնը գէպի խորան է բերվում խաչը ջուր գձելու համար։ Հայաստանեայց եկեղեցու կանոնների համաձայն միւռոնի գործածելը վերապահված է միայն կարգաւոր հոգևորականներին։

ԿՆՔԱՀԱՅՐ (ՔԱՀԻՈՐ)

Կանոնների բաժնի մէջ, նախորդ էջերում որոշ տեղեկություններով խօսել ենք կնքահօր վերաբերեալ, սակայն ինչ որ օգտվել ենք զանազան աղբիւրներից որպէս յատուկ տեղեկություն ատանմօր և կնքահօր յարաբերութեան մասին, համաձայն հայոց կանոնագրքի և ատենդութիւնների՝ գրի ենք առնում առանձին բաժնով այս վերնագրի ներքոյ։

Կնքահայրը այն անձնաւորութիւնն է, որի երաշխաւորութեամբ մկրտուողը ներկայանում է մկրտելու։ Հայաստանեայց եկեղեցու կանոնների համաձայն կնքահայրը պէտք է լինի ազատարգ, նոյն եկեղեցուն պատկանող ծնողների զաւակ և մկրտած ս. ատենդանով, գիտակցի նաև մկրտութեան էութիւնը, ընդունի այն պայմաններն ու պատէրները, որ գրուած են ծիսակատարութեան մաշտոցում։

Հին ժամանակներում այն ըմբռնումը կար, որ կնքահայրը ծնողներից յետոյ, մանկան համար երրորդ անձնաւորութիւնն էր համարվում որպէս հոգևոր ծնող, և եթէ ոչ աւելին, գոնէ ծնողների հաւասար իրաւասութիւն ունէր նրա դաստիարակութեան գործի մէջ, փոքր ժամանակից։ Կնքահօր և ատանմօր միջև որոշ կանոններով խնամիութեան կապ չէր հաստատվում, այդ տեսակետից Տաթևացին տալիս է հետևեալ բացատրութիւնը.

«Արդ հաստատակ կանոնք այսպէս եդին հարքն սուրբ, եթէ ի հոգևոր ազգն ոչ լինի խնամիութիւն մինչև Գ. ծնունդ, այսպէս, զի

կնքահայրն և սանամայրն ծնունդ մի, և նոցա զաւակ Բ. և նոցա թոռն Գ. զչորսն որ է թոռէ թոռն՝ լինին խնամի։ Տաթև էջ. 591-640։ Այս ձևով Տաթևացին սանմօր և կնքահօր միջև խնամիութեան կապը մինչև Գ. որէ երրորդ ազգ որգելում է, սակայն հայ աւանդապահ ժողովուրդը, աւելի հեռու է տանում խնամիութեան հաստատումը քաւորի և սանամօր միջև։

Փոխ քաւորութիւնը ժողովրդի բառով, խաչքաւոր է կոչւում, խաչքաւորութեան մէջ խնամիութիւն չի հաստատւում այդ պարագաների ներքոյ։ Տասնեակ տարիներ առաջ քաւոր փոխելը մեծ յանցանք էր համարւում՝ մանաւանդ գաւառական հայերի մէջ, երեխայի տկար կամ հաշմանդամ լինելու, նաև երեխայ ոտք չբռնելու, «այսինքը չապրելու» դէպքում՝ յանցանքը քաւոր փոխելու մէջ էին գտնում։ Մկրտութեան ժամանակ եթէ քաւորը բացակայ էր, պէտք է նրա եղբայրը կամ ամենամօտիկ ազգականը երեխայի համար քաւոր կարգւէր։ Քաւորը մեծ յարգանք է վայելում սանիկի պարագաների մօտ, մանաւանդ սանամօր կողմից, որը գիտուկ թէ քաւորից քառապատիկ տարիքով մեծ լինէր, սակայն չխօսկան է գառնում նրա մօտ և երես պահում նրանից մինչև խորին ծերութիւն, այս սովորութիւններն ու բարքերը վազուց ի վեր ունեցել է հայ ժողովուրդը, որը գեռևս պահւում է որոշ շրջաններում, քաւորի և սանամօր մասին որպէս յարգանքի արտայայտութիւն հայ երգիչը թողել է գեղեցիկ բանաստեղծութիւն, որից գրի եմ առնում հետևեալ չորս տողը.

Քաւորութիւնը պաղ ազբիւր է,
Մեռանն անմահական ջուր է,
Սանամէրը քաւորի ոտն համբուրէ,
Մաքուր սանամէրն ու քաւոր։

Հայ ժողովրդի աչքում քաւորութեան պատիւն ու պաշտօնը այնքան բարձր է, որին նըմանեցնում են Յիսուս Քրիստոսի մկրտիչ Սուրբ Յովհաննէսին, որովհետև Յովհաննէս վկայեց նրա Որդի Աստուծոյ լինելը, Յովհաննէս առաջին ձայնողն եղաւ թէ «Սա է զորմէ ասէի որ զկնի իմ գալոց է . . .» Հետևաբար Յովհաննէսի հաւատը սիրում և պատւում է ժողովուրդը քաւորին, որովհետև նա է միջնորդը, որ մկրտուողին երեխայութիւնից առաջնորդում է դէպի Ս. Աւազանը. դէպի արդարութիւն Հօրն երկնաւորի և ժառանգակից Քրիստոսի։ Ահա այսքան բարձր է քաւորութեան յարգանքը, սակայն այս օրերիս ամէն ինչ գարձել է ձևականութիւն, . . . և ինչ ենք տեսնում մեր այժմեան ընտանիքների մէջ. մէկ

ման մէջ առաւօտից մինչև երեկոյ քանի երեխայ որ կնքես, կամ պսակ կատարի, թւից աւելի նոր քաւորներ կըբուանեն, որոնց տէրն էլ չի ճանաչում։ Թող ժողովուրդն ինքը գտի, որ այս ձեռականութիւնները կանոնի հանգէպ ներելի չեն հայ քրիստոնեայ ընտանիքի համար։

ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ

Հայ քրիստոնեայ ընտանիքի նորածին մանկանը քրիստոնէական օրէնքի մէջ առնելու, իր ազգի կոչումը տալու համար հետեւում ենք Ցիսուսի ծնունդի շուրջ կատարուած երեւոյթներին կրօնական ձեւերի ներքոյ, ինչպէս հրեշտակներն ու հովիւները փառք ի բարձունս — երգով ուղեցին նրա Ս. ծնունդը, նոյնպէս էլ մի նորածին մանկան Հայաստանեայց Եկեղեցու հարազատ ժառանգը դարձնելու համար Քրիստոսով ենք ներկայացնում։ Ծնունդի ուրախութեամբ, մկրտութիւնով և քառասնօրեայ տաճարին ընծայումով։ Միտկատարութեան Մաշտոցներում Փառք ի բարձունս-ի մասին որեւէ տեղ յիշատակուած չկայ, բացի որոշ մաշտոցներից, որոնց մէջ գրուած է միայն մանկան շուրջ օրհնելու կարճ արարողութիւնը։ Հանգիպում ենք Հրաչեայ Աճառեանի «Նոր բառեր» Բ. հատոր — աշխատութեան. 33

էջում գրում է. Փարատել (Սրբել, Մաքրել-) կանոն փարատելու զուտ նորածին մանկանց — գրում է նա որ կըգտնեին նաև գաւառականներուն մէջ, ծնունդից յետոյ աղոցկանին տուն օրհնելը։

Ապա այս առթիւ ցանկ է տալիս 1714 թուականին տպուած մաշտոցի։ Ցիշեալ մաշտոցը մեր ձեռքը չհասաւ ստոյգը իմանալու համար տողերիս մէջ առնէի։ Ուրեմն Աճառեանն էլ հետաքրքրքրուել է մաշտոցներով որ տալիս է այս տեղեկութիւնը իր աշխատութեան մէջ։ Հետեւաբար աղոցկանի տուն օրհնելը, երկար ժամանակ ենթարկուելով փոփոխութիւնների դարձել է այսօրուայ Փառք ի բարձունս-ը որպէս նոր առաւելութիւններ գաւառականների մօտ, ըստ Հ. Աճառեանի։ Նորածին մանկան համար կատարուելիք — Փառք ի բարձունս - ի արարողութիւնը համընկնում է հրեշտակների և հովիւների երգին — որոնք մեծ ցնծութեամբ ուղեցին Փրկչի Ս. Ծնունդը, այդ առթիւ հայ մատենագիրները զանազան օրինակներով մէջբերումներ ունեն յիշատակուած։

«Ի բարձանց անտի քազմութիւն երկնաւորացն հրեշտակաց ցնծան, տալով աւետիս պայծառ վասն ծննդեան փրկչին, համօրէն բանական արարածք հրեշտակ և մարդիկ զարդարեցան ի հան-

գերձ փրկութեանց, օգք լցան օրհներգութեամբ, գիշերն առաւօտեցաւ երկնաւոր լուսով։ Եւ մեք ժողովեալք ի հանդիսի ծննդեան քո երգեսցուք քեզ։» Տաթև։ Թարգմ.- Այդ բարձունքէն երկնաւոր հրեշտակների բազմութիւնը ցնծում են, տալով աւետիսը փրկչի պայծառ ծնունդին, բանական բոլոր արարածները, հրեշտակները և մարդիկ զարդարուեցան փրկութեան հանդերձներով, օդը լցուեց օրհներգութեամբ և գիշերն առաւօտեցաւ երկնաւոր լուսով և մենք, որ ժողովել ենք քո ծննդեան հանդէսը փառաւորենք։ Բացատրութիւն Շարականաց։ Վենետիկ էջ - 60։ Տաթև էջ 61 — գիրք հարց։

Սարգիս քերում ենք Փառք ի բարձունս-ի արարողութեան ձևերը որ կատարուում է իրանահայութեան, հետևաբար հարաւային հայ ընտանիքների մէջ։

ՆՈՐԱՏԻՆ ՄԱՆԿԱՆ ՁՈՒՐ ՕՐՀՆԵԼ ԿԱՄ ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ

Այս արարողութիւնը, որ ժողովրդի առաքեմամբ կէս մկրտութիւն է համարուում, կատարուում է ծննդականի տան մէջ ծնունդից մէկ կամ երկու օր յետոյ։ Այս արարողութիւնից առաջ, մայրը երեխային ծիծ չի տալիս, մինչև երբ որ

Փառք ի Բարձունսի կատարման ժամանակ։ քահանան մի ամանով ջուր է օրհնում, ապա ծննդականը օրհնուած ջուրով լուանում է ատինքները և սկըսում է իր կաթով սնել մանկանը։ Այս սովորութիւնները մինչև այժմ էլ պահպանուում են գաւառաբնակ հայ ընտանիքների մէջ, սակայն քաղաքներում «Փառք ի Բարձունս»-ի արարողութիւնը կատարուում են մկրտութիւնից ժամեր առաջ, որովհետև շատ է պատահում որ այն գասակարգի ընտանիքները երեխաներին ամիսներ, նոյնիսկ տարիներ թողնում են առանց մկտելու։ Գարակահայ ընտանիքների մէջ առանցի Փառք ի Բարձունս-ի մկրտութիւն չեն կատարում։

Մանկան ջուր օրհնելը կամ Փառք ի Բարձունս-ը բաղկացած է հետևեալ արարողութիւնից։ Ծննդականի տան մէջ նախ երգուում է ծննդեան Շարականից «Մարհուրդ մեծ և սքանչելի» երգից երեք տուն, կարդացուում է Ղուկասու Աւետարանի ծննդեան գլուխներից «Եւ հովիւքն էին ի տեղւոջն . . . մինչև օրհնէին եւ ասէին Փառք ի բարձունս» հետո էլ զանգահարելով երգուում է մինչ կէսը, նորէն կարդում է քահանան Աւետարանի շարունակութիւնից, «Եւ եղեւ իբրեւ վերացան . . . մինչև զոր լուան եւ տեսին որպէս պատմեցաւ նոցա»։ Աւետարանից յետոյ երգուում է

Փառք ի բարձունսն միւս մասը, ասարին, եթէ այս արարողութիւնը մկրտութիւնից առաջ է կատարւում, քահանան օրհնեցի և սրբեցի . . . երգի հետ օրհնում է ջուրը երեք անգամ խաչը ջուրի մէջ խաչակնքելով ապա ասարում Սուրբ խաչիւ քարոզով ու պահպանիչով։

Այս է Փառք ի բարձունս-ի արարողութիւնը որ կատարւում է նորածին մանկան համար։ Ինչպէս և այլ ծէսերն ու աւանդութիւնները, այս սովորութիւններն էլ իր հետ բերելով հայրենիքից հայ ժողովուրդը պահել և պահում է որպէս սրբազան աւանդութիւն հայրերից ժառանգած և սուրբերից աւանդած, որը դարձել է օրէնք հաստատեալ հայի ընտանիքի մէջ։

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Հայ ժողովուրդը դարերից ի վեր հետևելով Հայաստանեայց եկեղեցւոյ հայրերի յօրինաց կանոններին ու ծէսերի կատարել է իր պարտականութիւնը հանդէպ իր զաւակի, մկրտել է նրան Ս. Աւազանով, գրոշմել է Ս. միւռոնով, և կոչել է հայի անունով։ Պարսկահայ բոլոր գաղութներում մկրտութիւնը կատարւում է խորհրդակատարութեան մաշտոցների վրայով, որոնց մէջ պարունակում են մկրտութեան վերաբերող սաղմոսներ, շարականներ, աղօթքներ, մարգարէի և առաքելոց գրածքներ, Աւետարանից հատուածներ, Նիկիոյ Հաւատամքը և խրատներ արարողութեան ձևերի մասին։

Իրանահայութեան հարաւային շրջաններում գեռևս վաղուց ի վեր խորհրդակատարութեան համար գործ է ածւում Տէր Մարգարայ Տէր Կարապետեան Մաշտոցը, որը տարբերւում է միւս բոլոր մաշտոցներից, որոշ արարողութիւններով, սակայն մի է կատարելիք խորհուրդը։ Անհրաժեշտ համարեցի ստուգ գրի առնել մկրտութեան արարողութիւնը որոշ բացատրութիւններով ու թարգմանութիւններով, յիշեալ մաշտոցի վրայից, բերելով նաև համառօտ տեղեկութիւն զանազանուող այլ մաշտոցներից։ Տ. Մ. Տէր Կարապետեան մաշտոցի առաջին էջում. մեծերի մկրտութեան համար որոշ պայմաններ է գրած. որ հրահանգում է թէ հաստատուր մէկը, եթէ մկրտութեան դայ պէտք է սովորի և հաւատայ քրիստոնէութիւնը, հաւատայ Ս. Երրորդութիւնը Ցիսուսի Ս. ծնունդը, խաչելութիւնը, թաղումն ու յարութիւնը, համբարձումն ու կրկին գալուստը, հետևաբար իմանալ մկրտութեան խորհուրդը, ենթարկուել եկեղեցու կանոններին և մկրտուել։

Սոյն խրատը գրուած է ճանաչ առաջ մատեանումս։

Սակայն նորածին մանկանց մկրտութեան կարգը հետեւեալն է... յորժամ ուրբաթայ լինի. գրում է մաշտոցում, մանուկը տարուում է եկեղեցի, նախ քան եկեղեցու դուռ մտնելը, սկսում են Գլ. ՃԼ. Սաղմոսը «Տէր ոչ բարձրացաւ սիրտ իմ» և այլն . . հետո էլ ոլորում են նարօտը, այս սաղմոսը կրկնուում է երեք անգամ, աւարտելուց յետոյ քահանան խաչակնքում է նարօտը, կարդացուում է «Տուր զօրութիւն ծառայի քո. և Ամենարհեցո Տէր զունկն քո» սաղմոսը մինչև վերջ։ Սարկաւագը՝ Ենդրեացուք հաւատով . . . քարոզը կասէ, ապա և քահանան ԺԲ.-12 Տէր ողորմեայ ասելուց յետոյ կարդում է այս աղօթքը, Տէր Աստուած, դու որ վրիպող և քեզնից հեռացած, գրախտային փառաւոր կեանքից զրկուած մարդկային ցեղի համար չմերժեցիր ուղարկելու քո միածին որդին, որ խոնարհեցաւ և առաւ մարդկային բոլոր կերպարանքները քացի մեղքից, մեզ վերստին շնորհ տալու իր չարչարանքով, խաչելութեամբ և արիւնի գնով։ Այժմ էլ բարեյաջողութեամբ ընդունիր այս քրիստոնեայ անուն կոչուող ծառայիդ, որ գիմեալ գալիս է գէպի քո աստուածութիւնդ, տուր սրան զօրութիւն, օգնիր սրան, և արժանի արա Ս. աւազանով մաքրուելու և անարատ կեանքով ապրելու քո ժառանգութեանդ մէջ։ Քաւարի շապիկ հագնելը։*)

Այս աղօթքից յետոյ, մանկան իր գիրկն է առնում քաւարը, երեք անգամ խոնարհւում է գէպի խորան և ասում Իկ. սաղմոսը «Ի քեզ անկայ ես յարգանդէ յորովայնէ մօր իմոյ, դու ես Աստուած իմ» և այլն . . . այս սաղմոսի միջոցին ճանաչում է որպէս իր Աստուածը, և ինքը նրա խոնարհ որդին։ Սարկաւագը կարդում է. Եւ ես խաղաղութեան . . . քարոզը. «Վասն երեխայիս մարգասէր Աստծուն աղաչեցէք, որ իր մեծ ողորմութեամբ ողորմէ և արժանացնէ սրան, վերստին ծննդեան լուացումով, զգենի անապականութիւն, և միանալ իւր անուանով հաւատացեալներին, կենալով իր շնորհների մէջ։

Աղօթքից յետոյ կարդում է ԻԱ. Սաղմոսը. Առ քեզ Տէր համբարձի զանձն իմ... Սաղմոս ԻԲ. Գասա սրա ինձ Տէր, զի յամբծութեան իմում... և Ողորմեա ինձ Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում ...։

---

*) Քաւարի շապիկ հագցնելու մասին մատեանների մէջ չի յիշատակում։ Այս ծէսը գիւղերում սովորութիւն չկայ։ միայն հանդիպում ենք Դերենիկ Եպիս.-ի Հ. Առքկ. Ս. Եկեղեցու խորհուրդները տպած Բէյրութ 1957 թ. էջ 16, սակայն քաղաքներում պահւում է այս ծէսը։

Ապա սարկաւագի «Եւ եւ խաղաղութեան» կարճ քարոզից յետոյ քահանան ասում է հետեւեալ աղօթքը։ Տէր Աստուած, բոլոր արարածների Արարիչ, ծառաց քո ահաւոր անունից ապաւինելով, խոնարհեցնում է գլուխը քո առաջ, ուր երկրպագում են երկրաւորները, երկնաւորները և անդարամեռականները, և ամէն լեզուներ խոստովանում են, թէ Յիսուս Քրիստոսը Տէր է Աստուծային փառքով։ Այժմ ՅՎ Տէր, քո այդ ահաւոր անունից հաղորդակից արա սրան, որ հալածի գեների խաբէութիւններին, կռապաշտ մոլորութիւնների և սատանայական սրգայթներին։ Այս աղօթքի մէջ խորհրդակատար քահանան խնդրում է Աստծուց մկրտողին շնորհէ երկնային շնորհ, ուրբ ուղղանում մկրտելով արժանացնի սրան որ այս վերջին ծնունդով առնէ Ս. Հոգին մարմին և անդամ լինի Քրիստոսի եկեղեցուն։

Աղմոսների և աղօթքների ուղղութեամբ, քաւորը մանկան գրկած քահանայի հետ երեսները դէպի արեւմուտ դարձած երեք անգամ միասին կարդում են Հրաժարիմքը, այսպէս. Քահանան հարց է տալիս կնքահօրը-հրաժարիս ի սատանայէ. Կնքահայրը պատասխանում է. հրաժարում ենք եւ և երեխայս սատանայից, նրա խաբէութիւ-

նից, նրա պատրանքից, նրա խորհրդից, նրա չար կամեցողութիւնից, նրա չար հրեշտակներից, և այլն։ Ապա դառնում են դէպի արեւելք, ըստ մաշտոցի դէպի խորան դառնալիս քահանան կանգնում է ձախ կողմում։ Նորէն քահանան հարց է տալիս. «Հաւատամ ամենասուրբ Երրորդութիւնն». քաւորը պատասխանում է, թէ «Հաւատամ եւ և երեխայս Սուրբ Երրորդութեանը, ամենակալ Հօրը, Միածին Որդուն, և ճշմարիտ Սուրբ Հոգւոյն, և բոլոր արարածները ստեղծողին։ Հաւատում ենք Գաբրիէլի ուսերս տալուն, Քրիստոսի ծնունդին, Մկրտութիւնին, Տնօրէնութեանն, նրա Վարդապետութիւնին, Սքանչելագործութիւններին, Գայծառակերպութիւնին, Իր կամաւ խաչի վրայ կրած չարչարանքին, մահուան, թաղման և երեք օրից յետոյ յարութիւն առնելուն, երկինք համբարձելուն և Հօր աջ կողմ նստելուն։ Հաւատում ենք նրա կրկին գալստեանը և մեզքերի թողութիւն տալուն. մեռելոց յարութիւն տալուն նաև հաստատում իւրաքանչիւրին իր գործի համեմատ, և յաւիտենական կեանքին, հաւատով կը հաւատանք»։ Կարդացւում է Մատթէոսի Աւետարանի յարութեան ԻԸ. գլուխ 16 համարը, որ Յիսուս յարութիւնից յետոյ երեւում է աշակերտներին և պատուիրում նրանց, թէ «Գնացէք քա-

լոր ազգերը աշակերտեցէք, մկրտելով նրանց Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյ անունով։ Սովորեցրէք նրանց պահել այն ամենը, ինչ որ ես պատուիրում եմ ձեզ։ Եւ ահաւասիկ ես ամեն օր ձեզ հետ եմ մինչև կատարած աշխարհի»։ Այս Աւետարանից յետոյ կնքահայրը մանկան գրկած առաջնորդւում է տաճարի առաջ և քահանան կարդում է Նիկիոյ ՀԱՒԱՏԱՄՔԸ, սարկաւագը կարդում է. Եւ ես խաղաղութեան .... Եւ ես հաւատով ազաչեցուք — Քարոզը, Քհնյ. ասում է հետեւեալ աղօթքը. Մեր տէր և Փրկիչ Յիսուս Քրիստոս, որ մեծ ես քո ողորմութիւնովդ և բարերարութեան առատ պարգեւներով։ Որ դու քո կամքով այս ժամուս համբերեցիր խաչի չարչարանքին և մեռնելու մեր մեղքերի համար, և երանելի Առաքեալներին սուրբ Հոգին պարգեւեցիր առատապէս։ Աղաչում ենք քեզ Տէր, մեզ էլ հաղորդակից արա սատուածային պարգեւներիդ վասն մեր մեղաց թողութեան և Ս. Հոգւոյ ընդունելութեան։ Որպէսզի արժանի լինենք զոհութեամբ փառաւորելու քեզ, ընդ Հօր և Սուրբ Հոգւոյ .... Աստուածութիւն ամենեցուն։

Մեր Փրկիչ Քրիստոս, քո խաղաղութիւնովդ, որ վեր է մեր բանից ու գիտութիւնից, ամրացրու և աներկիւղ պահիր մեզ բոլոր չարերից,

մեզ էլ հաւատարեցրու այն ճշմարիտ երկրպագողներին, որ քեզ երկրպագում են հոգով և ճշմարտութիւնով։ Վասն զի Սուրբ Երրորդութեանդ վայել է փառք, իշխանութիւն և պատիւ...։

Կարդացւում է սաղմոս ՃԺԷ. Աստուած եղերուք Տեառն զի բարի է...

Միւս մաշտոցներում գրում է. Առ մատնեն յեկեղեցին ասելով. «Այս գուռն Տեառն է, և արդարք մտանեն ընդ սա», ապա երգւում է Դեկ. Շարականն զՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ քո գուռն բաց մեզ Տէր և այլն։ Աւարտին Փառք Հօր և Որդւոյ... Քարոզ Սուրբ եկեղեցեաւս. Աղօթք. Ի մէջ տաճարիս և այլն։ Երբան գէպի յուզանն ասելով, «Արեգակն արդարութեան»։ Շարականից երեք տուն, որից յետոյ սարկաւագը կասէ. Եւ ես խաղաղութեան... Վասն իշանելոյ շնորհաց Հոգւոյն սրբոյ ընդ իւղոյս այսորիկ զՏէր աղաչեսցուք։ Սակայն այս մաշտոցում. «Աստուածութեան եղերուք...» Սաղմոսից յետոյ գրում է. Երբան գէպի աւազանն երգելով - Երգեսցուք երգ նոր շարականից երեք տուն։

Սաղմոսի աւարտին, Երգեսցուք երգ նոր... Ա.Ջ. շարականը երգելով տաճարի առաջից գնում են մկրտութեան աւազանի մօտ, քաւորը երեխան գրկին խոնարհւում է գէպի աւազանը և քահա-

նան կարգում է Գլուխ Ե. սաղմոսը, «Մահից ի ոտն քո և երկրպագից ի տաճար սուրբ քո երկիւղիւ քոյ», և այլն։ Սաղմոսից յետոյ Փառք Հօր և ... Քարոզ՝ Սուրբ եկեղեցուս աղաչեսցուք.. Քհնայ. Ի մէջ տաճարիս ... Հայր մեր որ յերկինս ես ... և պատարաստում է Միւռոնը։ Սարկ. Եւ ես խաղաղութեան ... Վասն իշանելոյ յիւղս այս շնորհաց ամենազօր Հոգւոյդ Սրբոյ ... և այլն։ Քահանան կարգում է հեռանալ աղօթքը. Օրհնեալ ես Տէր, Ամենակալ Աստուած, որ ընտրեցիր քեզ համար նոր ժողովուրդ, ի քահանայութիւն և ի թագաւորութիւն. սուրբ ազգ և սեփհական ժողովուրդ։ Եւ ըստ այնմ առաջներում, ամենասուրբ իւղով օծեցիր քահանաներին, թագաւորներին և մարգարէներին։ Եւ այժմ էլ ով բարերար Տէր, աղաչում ենք քեզ առաքիր Սուրբ Հոգւոյդ շնորհը այս իւղի մէջ, վասն զի ով որ օծւի սրանով, նրա մէջ գայ հոգևոր իմաստութիւն, ի նահատակութիւն և ի յաղթութիւն հակառակամարտին, և ի զօրու լինի պատուիրանապահութեան և առաքինի գործերի մէջ։ Եւ աստուածպաշտութեան կրթութեան մէջ կատարեալ լինի։ Որպէսզի լուսաւոր մարդով, իր անձի փրկութեամբ, ապրի այս աշխարհում։ Եւ ամենասուրբ Երրորդութեան փառքով արժանի լինի մեր Տէր

Յիսուս Քրիստոսի անունով հասնելու ժառանգութեան վիճակին։ Այս աղօթքից յետոյ քահանան նաչը դնում է Ս. Աւազանի մէջ, երկու լոյսեր է վառում աւազանի մէջ և ձախ կողքերին և երգում են Լոյս ի լուսոյ ի Հօրէ առաքեցար, ԴՀ. շարականից երեք տուն, որից յետոյ քահանան առաք ջուրը խաչաձև հոսեցնելով աւազանի մէջ ասում է ԻԸ. գլուխ սաղմոսը. «Ձայն Տեառն ի վերայ ջուրց». երկու տուն. և սարկաւագը կարդում է Եզեկիէլ մարգարէի ԼՁ. գլուխ 25 համարից. Այսպէս ասէ Տէր Ագռնայի, ես ձեզ վերայ մաքուր ջուր պիտի սրսկեմ. և մաքուր պիտի լինէք։ Ձեր բոլոր պղծութիւններից ու ձեր բոլոր կուռքերից պիտի մաքրեմ ձեզ։ Եւ ես ձեզ նոր սիրտ պիտի տամ, և նոր հոգի պիտի դնեմ ձեր միջում, և վեր պիտի առնեմ ձեր մարմնից քարեղէն սիրտը և ձեզ մարմնեղէն սիրտ պիտի տամ։ Եւ իմ հոգին պիտի դնեմ ձեր միջումը ... և իմ ժողովուրդը լինէք. և ես ձեր Աստուածը լինեմ։ Եզեկիէլ Գլուխ ԼՁ. համար 25-27։ Կարդացւում է Զօրոս Առաքեալի Գաղատաց. Թղթի Գ. գլուխ 24 համարը։ Ուրեմն օրէնքը մեզ համար դաստիարակ եղաւ դէպի Յիսուս Քրիստոսը, որ հաւատքից արդարանանք։ Բայց երբ որ հաւատքն եկաւ, այլ ես դաստիարակի տակ չենք։

Քանզի ամենքդ Աստուծոյ որդի էք Քրիստոս Յիսուսի հաւատքովը։ Քանզի ամենքդ որ Քրիստոսումը մկրտուեցաք, Քրիստոսին հագած էք։ Այլևս ոչ Հրէա կայ և ոչ Յոյն, ոչ ծառայ կայ և ոչ ազատ, ոչ արու կայ և ոչ էգ, քանզի դուք ամենքդ մէկ էք Քրիստոս Յիսուսումը, Եզեկիէլի ընթերցուածի մէջ կտեսնենք որ Տէրը մաքուր ջուրի սրսկումով, և սուրբ հոգւոյ շնորհումով փոխում է քարեղէն սիրտերը և մաքրում նրանց իրենց պղծութիւններից, տալիս է մարմնեղէն սիրտ, դարձնում է իրեն սեփհական ժողովուրդ։ Նոյնպէս և հաստատում է սրբազան Առաքեալը, օրէնքը մեզի համար դաստիարակ եղաւ, մեզի տանելու դէպի Յիսուս Քրիստոսը, որ նրա հաւատքով արդարանանք։ Քանզի ամենքդ Աստուծոյ որդի էք։ Ասում է Առաքեալը. — Որովհետև մկրտեցաք Քրիստոսով և Քրիստոսը ձեր մէջ հագած ունիք։ Այս բանի մէջ ոչ մի տարբերութիւն կայ հրէայի, յոյնի, հեթանոսի, ազատի, ծառայի, արուի և էգի համար, վասնզի դուք մէկ էք Յիսուս Քրիստոսի մօտ։ Ուրեմն եթէ դուք Քրիստոսումն էք — ասում է Առաքեալը — Աբրահամու զաւակ և ուխտաց ժառանգ էք։ Կարդացուում է Յովհաննու Աւետարանի Գ. Գլուխ. 1 համարից, որը փարիսեցի իշխան Նիկոդիմոսի գիշերուան Յիսուսի հետ զրոյցի տեսնելու դէպքի է յայտնաբերում, թէ ինչպէս Յիսուս երեք անգամ կրկնում է նրա համար, որ եթէ մէկը վերստին չծնի չի կարող մտնել Աստուծոյ արքայութիւնը, իսկ երբ Նիկոդիմոսը առարկում է անկարելիութեան համար, Յիսուս դարձեալ կրկնում է — Աստցի քեզ, պարտ է ձեզ վերստին ծնուել։ Որովհետև մարմնից ծնուածը մարմին է և հոգուց ծնուածը հոգի է. դու մի զարմանալ, որ ասացի թէ պարտ է վերստին ծնուել. ինչպէս քամին փչում է և չգիտես թէ որ կողմից է գալիս և դէպի ուր գնում. նոյնպէս է, և որևէ մէկի համար հոգուց ծնունդը։

Աւետարանից յետոյ Քարոզ. Վասն ի վերուստ խաղաղութեան ... որա վերջաւորութեան յիշում է մի քանի սուրբերի անուններ մկրտուող երեխայի համար բարեխօսելու։ Քահանան կարդում է հետևեալ աղօթքը աւազանի առաջ. Դու Տէր, որ քո մեծ զօրութիւնով ստեղծեցիր ծովը ցամաքը, և նրա մէջ եղած բոլոր արարածները ..... Հրաման տալով Սուրբ Առաքեալներին քարոզելու և մկրտելու համար բոլոր հեթանոսներին, Հօր Որդւոյ և Սուրբ Հոգւոյ անունով։ Նաև սահմանեցիր քո անուան բանով թէ, ովքեր որ ջուրով և Ս. Հոգով չծնուեն արքայութիւն չեն

մանելու։ Այդ բանից զարհուրելով քո ծառայ, մշանջենաւոր կեանք ունենալու համար կամաւ եկել է հոգեւոր մկրտութիւն առնելու այս ջուրով։ Աղաչում եմ քեզ ո՞վ Տէր, ուղարկիր Քո Սուրբ Հոգին այս ջուրի մէջ, օրհնիր և սրբիր ինչպէս որ սրբեցիր Յորդանանու ջուրը Քո իջմամբ ... Այս օրինակով որպէս վերսին ծնունդ բոլոր մարդկանց համար, շնորհիր նաև սրան, որ այժմ մկրտւում է այս ջուրով, լինի մեղաց թողութիւն, և սուրբ հոգւոյ ընդունելութիւն, որպէսզի լինելով երկնաւոր հօրը և ժառանգ արքայութեան։ Որպէսզի մեղքից սրբելով, քո կամքով ապրի այս աշխարհում, նաև բոլոր սուրբերի հետ վայելի հանգերձեալ կեանքիդ անպատ բարիքներդ և գոհութեամբ փառաւորեսցէ զՀայր և զՈրդի ....

Ապա քահանան Ս. Ոգին և Ս. Միւռոնը իր ձեռքն առնելով օրհնում է աւազանի ջուրը և խաչակնքելով ասում է. «Օրհնեսցի և սրբեսցի ջուրս այս նշանաւ սուրբ խաչիւս և սուրբ Աւետարանաւս և սուրբ Միւռոնաւս ... Եւ այլն. Տես Մաշտոցներում։ Այնուհետև երգւում է Հոգեգալստեան «Առաքելոյ աղաւնոյ» Դ.Զ. շարականից երեք տուն և իւրաքանչիւր տան հետ Սուրբ Միւռոն է հեղում աւազանի ջրի մէջ։ Սրա աւարտին

քահանան մերկացնել է տալիս երեխային լուացնելու համար և կարդում է հետևեալ աղօթքը։*) Տէր դու որ կոչեցիր քո ծառային մկրտութեամբ սրբելու և լուսաւորելու, աղաչում ենք քեզ որպէս արժանի արա քո մեծութեանդ շնորհներով, հեռացրու հին մեղքերը և նորոգիր նոր կեանքով։ Եւ սուրբ Հոգու զօրութիւնովդ լցրու որպէս լինելու որդեգիր Քրիստոսի քո, որում վայել է փառք ...։ Ապա երեք անգամ հարցնում է կնքահօրը, որն իր հերթին պատասխանում է։ Քհնյ. Զի՞նչ խնդրես. Եթէ երեխան փոքր է կնքահայրն է ասում նրա համար, «Խնդրեմ մկրտիլ մաքրիլ ի մեղաց, ազատիլ ի դիւաց և ծառայել Աստուծոյ»։ Քհնյ. ասում է քո հա-

*) Քահանան այստեղ պէտք է շատ ուշադիր լինի, որովհետև նա գործ ունի մի նուրբ մանկան, քարէ արագանի նւ այրիչ տաք ջուրի հետ, վասնզի երբեմն այնպիսի երեխաներ են մկրտելու բերւում, որոնք ափխոյժ լինելով դուրս են ցատկում մկրտողի ձեռքից աւազանի մէջ դնելիս, եթէ քահանան մի փոքր ետեղ-ի այս գործի մէջ անել վինակի կրմատեի։ Մանաւանդ ջուրի տաքութեան աստիճանը փորձելու մէջ։ Հնուց առակ է դարձել ժողովրդի համար։ իբր թէ մի անփորձ նորընծայ քահանայ, երեխային մկրտելիս այրել էր աւազանի տաք ջուրի մէջ, ապա յանձնելով տիրոջն ասել է,—Թէ այս մէկը չեղաւ գնացէք մէկն էլ բերէք։

ուտքովդ քեզ լինի։ Քհնյ. խնդրում է երեխայի անունը և ձախ ձեռքով բռնում է մանկան պարանոցը աջ ձեռքով տատիկները, որ մանկան երեսը լինում է դէպի արևելեան կողմը, տալիս է երեխայի անունը այս ձևով «Այս անուն ծառայ Աստուծոյ եկեալ կամաւ յերեխայութիւն, յերեխայութիւնից ի մկրտութիւն՝ և մկրտւում է այժմ իմ ձեռքով, Յանուն Հօր. և մի ափ ջուր է հեղում մանկան գլխին. և Որդւոյ. և մի ափ ջուր է թափում երեխի վրայ. և Հոգւոյն սրբոյ. մի ափ ջուր ևս հեղում. և ապա մկրտող քահանան մանկանը երեք անգամ ընկղմեցնում է աւազանի ջուրի մէջ և ասում *) «Գնեալ արեամբն Քրիստոսի ի ծառայութենէ մեղաց՝ ընդունելով զգաստութիւն որդեգրութեան Հօրդ երկնաւորի, լեալ ժառանգակից Քրիստոսի, և Տաճար Հոգւոյդ Սրբոյ։ Թարգմանութ. Մեղքի ծառայութիւնից Քրիստոսի արեամբ գնելով, ընդունելով ազատութիւն, լինելով որդեգիր Հօրդ երկնաւորիդ, և ժառանգակից Քրիստոսի և Տաճար Սուրբ Հոգւոյդ։ Աւազանի մէջ լանում է երեխայի ողջ մարմինը և ասում՝ «Ովքեր որ Քրիստոսով մկրտեցիք հագած էք նրան, Ովքեր որ Հօրով լուսաւորեցիք Սուրբ Հոգին ձեզ կուրախացնէ։

Մանկան աւազանի մէջ լողացնելիս քահանան կարդում է Յիսուսի Յորդանան գալու և Յովհաննէսից մկրտելու Մատթէոսի Գ. Գլուխ, համար 13 Աւետարանից։ «Յայնժամ գայ Յիսուս ի Գալիլէէ ի Յորդանան. մինչև. ել վաղվաղակի ի ջրոյ անտի։» Ապա ջրից դուրս է բերում երեխային և շարունակում։ և ահա բացան երկինք մինչև վերջ։ Երեխան յանձնում է կնքահօրն, կարդում է տէրունական աղօթքը և հետևեալ աղօթքները, մկրտիչ հոգևորականը գառնում է Տէր Յիսուս Քրիստոսին ասելով. Դու որ լուսաւորել ես բոլոր արարածներին, քո Աստուածային լոյսդ ծագելով ծառայիդ վրայ, այսինքը մկրտուածի վրայ, որդեգիր դարձնելով սրան աղատեցիր, սրբեցիր և արդարացրիր, շնորհիր անապական կեանք և խառնիր քո սիրելի արդարների խմբին։ Դու որ գիտես գաղտնիքներ, սուրբ ես և սուրբերի մէջ ես քնակուած, որ գիտութիւն ես շնորհում քեզ հաւատացողներին, դու որ իշխանութիւն ուսեցիր վերստին ծնելու ջրով և Հոգով և այս ծառային (տալիս է մկրտուածի անունը) քաւութեամբ նոր մարդ դարձրիր Սուրբ աւազանով։ Սրբիր սրան ճշմարտութիւնովդ,

*) Ծանօթ.- Երեք անգամ ջուրի մէջ ընկղմելը, այսինքը թաղում է հնուրնաճ մեղքը. որ ճեռնակում է Քրիստոսի երեքօրեայ թաղման։

Սուրբ Հոգւոյ շնորհով լցրու որան, որ քո Սուրբ անունիդ համար լինի Տաճար և բնակարան։ Վասն զի կարողանայ գնալ արդարութեան ճանապարհների մէջ, և կարողանայ համարձակութեամբ և աչալրջութեամբ կենալ Ցիսուս Քրիստոսի ահաւոր բեմի առաջ, որում վայել է փառք և իշխանութիւն . . . և այլն։

ԳՐՈՇՄ

Մկրտութիւնից անմիջապէս յետոյ կատարւում է գրոշմի արարողութիւնը։ Երեխային տալիս են կնքահօր գիրկը և քահանան սուրբ միւռոնով- ալ ձեռքի բթամատով- օծում է մանկան մարմնի 13 մասերը, գրոշմելու հետ կարդում է իւրաքանչիւրի համար առանձին ազօթք։ Նախ գրոշմում է երեխայի ճակատը ապա աչքերը, ականջները, հառաջիքը, բերանը, ձեռքերը, սիրտը, թիկունքը և ոտները։ Ճակատի գրոշմելու համար Գրիգոր Տաթևացին հետևեալ բացատրութիւնն է տալիս։

Նախ զճակատն գրոշմեմք, զի առանց երկիւղի զինեսցին, և ապա զբոլոր անդամքն ապառազինեսցուք . . . ճակատ ցուցանէ թէ՝ առանց ամօթոյ յայտնի և համարձակ պարտ է ցուցանել զդաւանութիւն հաւատոյ, առաջի ամենայն մարդկան, և ոչ ծածկել և թագուցանել։ Տաթև էջ 151։ Ճակատ ասելով գիտենք խօսքը գլխի մասին է, որի մէջ ժողովւում է իմացականութիւնը, կամ ուղեղը, որ առաջնորդում է մարմնի բոլոր անդամներին։ Եկեղեցու համար ճակատ են համարւում, Մարգարէները և Առաքեալները, գրում է Տաթևաց. որովհետև առաջ նրանք առան Սուրբ Հոգին, յետոյ այն հաւատացեալները՝ որոնք անդամներ են Քրիստոսի համար, ուրեմն դրա համար է, որ առաջ ճակատն ենք գրոշմում, ապա և միւս անդամները։ Նորէն ասելացնում է թէ, նախ ճակատը գրոշմում ենք, որ առանց երկիւղի ինքը զինւի և միւս անդամներին էլ ապառազինի պարզ ճակատով համարձակապէս իր դաւանութիւնը իր հաւատը, առանց թագցնելու յայտնի գարձնի մարդկանց առաջ։ *)

Մանկան Ս. Միւռոնով գրոշմելիս մարմնի

*) Մեռոնւած երեխան հայ ժողովրդի աչքում սրբւած է համարւում, եթէ պատահի։ւոր մի հայի զաւակից անառակ վարքեր նկատւեն, այս։պիսիների համար ժողովրդական խօսքով ասում են թէ, երեսի մեռոնը գնացել է կամ թէ սրա երեսին մեռոն չնեֆսել, իբր թէ սրբութիւնը վրայից գնացել է։ Հետեւաբար մեռոնը ժողովրդի աչքում մեծ պատկառանք է համարւում։

իւրաքանչիւր մասերի համար մաշառցում գրուած են իրեն վերաբերեալ աղօթքներ, որ ասուում են այդ արարողութեան հետ մկրտիչ քահանայի կողմից, հետեւեալ ձեւով.

Ա. Ճակատի կնիքը՝ երկնաւոր պարգեւների անապականութեան համար է։

Բ. Աչքերի գրոշմը նրանց լուսաւորութեան համար է։

Գ. Ականջների օծումը՝ Աստուածային պատուիրանքները լսելու համար է։

Դ. Քթի օծումը՝ շնչհում է նորամկրտածին լաւ հոտոտելիք, որպէսզի իր կեանքի բոլոր օրերում շարունակի նրա համար այդ անուշահոտութեան բուրմունքը։

Ե. Բերանի օծումը՝ նրա համար է որ մաքուր մնայ և իր շրթունքները ամուր պահպան գուռ լինեն բերանի համար։

Զ. Ձեռքերի օծումը՝ նրա համար է, որպէսզի նրանք գործեն շարունակ քաջի և առաքինի գործեր։

Է. Սրտի գրոշմը՝ ասուում է որպէսզի նա հաստատի սրբութեան մէջ և ճշմարիտ հոգին նորոգի նրա մէջ։

Ը. Քամակի գրոշմը՝ ասուում է, որպէս ամրութիւն վահանի պէս պինդ լինի նա, որ կարողանայ դիմադրել և յաղթե չարի բոլոր նետերին։

Թ. Ոտքերի օծելիքը ասուում է, որպէսզի նրանք զօրանան և իրենց քայլերը ուղիղ և անսասան լինեն կեանքի բոլոր օրերում։

Երեխային եկեղեցուց դէպի տուն տանելիս ճանապարհին մեղմ ձայնով երգում են Ս. Յովհաննէս մկրտչի «Արեգականն արդարութեան» շարականը, ապա տան մուտքից Լոյս ի լուսոյ շարականից մէկ կամ երկու տուն, մինչև քաւորը մանկան յանձնում է մօրը։ Տան մէջ քահանան կարդում է Մատթէոսի Ա. Գլխի 18 համարից մի քանի տուն, և աւարտում Սուրբ խաչիւս. քարոզով ու պահպանիչով։ Արեգականն արդարութեան երգը ասուում է միայն գուսան հայրենակի գիւղերում որ քահանան շուրջառով եկեղեցուց գընում էր մինչև մկրտուզի տունը, սակայն քաղաքներում միմիայն տան մուտքից ասուում է Լոյս ի լուսոյ երգը և վերյիշեալ արարողութիւնը։

Թէև բոլոր մաշառցներում էլ գրում է մանկան քառասնօրեայի արարողութիւնը, սակայն դադարած են կատարելուց այդ ծէսը, թէ գիւղերում և թէ քաղաքաքնակ հայ ժողովուրդը, որովհետև այս բանը մկրտութեան նման շատ էլ ընդհանրական չէ երեխայի համար ժողովրդի մօտ,

սակայն բոլորովին վերացած չէ հայոց մէջ քառասնօրեայի կատարումը, գարձեալ գտնւում են ընտանիքներ, որոնք միշտ էլ իրենց մանուկներին քառասնօրեայ Տաճարի բերելու սովորութիւնը պահում են։ Քառասնօրեայի կատարումը ընգօրինակւում է քառասնօրեայ Յիսուսին տաճար բերելուն, ինչպէս Սիմէոն ծերունին տաճարի մէջ մանկան իր գիրկն առած պատւում և օրհնում էր մանկանը և Մարիամին, նոյն օրինակով քահանան մանկան գրկելով պատեցնում է սեղանի շուրջը, ծիսարանում գրւած աղօթքներով օրհնում է մանկան և մօրը, և համառօտ ձևով ասւում է Քրիստոսի քառասնօրեայ Տաճար գալըստեան արարողութիւնից։ Տես մաշտոցներում։

Մկրտութիւնը կատարւում է նաև այլ ձևերով, այսինքը եթէ մկրտողը հասակով է լինում, կամ մանուկ է սակայն հիւանդ է լինում, որոնք հնարաւոր չեն Ս. Աւազանի մէջ լողացնելու, որոնց համար էս մկրտութեան բոլոր արարողութիւնը կատարւում է իր հերթին, բացի աւազանի մէջ գնելը։ Հետևաբար աւազանում լողացնելու փոխարէն մաքուր բամբակով օրհնւած միւռոնաջրով արկում են մարմնի այն մասերը, որոնք պէտք է մեռոնւեն ապա միևնոյն ձևով կատարում մկրտութիւնը։

Երեխային գրաշմելուց յետոյ հագցնում են սպիտակեղէն հագուստ կամ կնգուղ, որ գիւղերում է գործ ածւում, կապում է նարօտը։ Քահանան առնում է մանկանը և բարձրանում է խորանը, խնարհւելով երկրպագում է Ս. սեղանին, խնարհւում և երկրպագում է աւազանին, խնարհւում և երկրպագում է աշակոդմի խորհրդատանը ապա մանկանը բեմից քաւորի գիրկն է տալիս, այս արարողութեան հետ քահանան խորանում առում է հետևեալը։ (այս անուն) տալիս է երեխայի անունը, ծառայ Քրիստոսի՝ եկեալ յերեխայութենէ ի մկրտութիւն, ի մկրտութենէ երկրպագութիւն, երկրպագէ Ս. սեղանոյս երկրպագէ Ս. խաչանիս, երկրպագէ Ս. աւազանիս. որ մերկացաւ զանօրէնութիւն, և զգեցաւ զլոյս ատուածագիտութեան։ Որոշ շրջաններում մանկանը երեք անգամ են պատեցնում տաճարի շուրջ. սակայն յիշատակւած չէ մաշտոցներում այն ձևերի մասին։ Քահանան հաղորդում է նոր մկրտւածին. երկրամամ է վառում և տալիս քաւորի ձեռքն, խորհրդակատարութիւնն աւարտում է ըստ մաշտոցի՝ Ս. խաչիւս, քարոզով և պահպանիչով։ Մաշտոցներում այս արարողութեան վերջաւորութիւններին գրած են նաև սաղմոսներ, աղօթքներ և շարականոց երգեր, սակայն ըստ օրւայ պայմանների կրճատւում են որոշ մասերը։

ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Միսկատարութեան արարողութիւններից զատ տեղի է ունեցել ժողովրդի մէջ աւանդութիւններ և ինքնահնար սովորութիւններ, որ դեռևս երևում են որոշ հայաբնակ շրջաններում, այստեղ համառօտաբար խօսում եմ միայն նորածին մանկան և ծննդականի մասին։ Անլուծանելի պայման է ծննդականի քառասունք պահելը գաւառաբընակ ընտանիքների մէջ։ Քառասունքի մէջ լինելով երեխայի ծնողները չէին մասնակցի իրենց քարեկամների կամ դրացիների նորածին մանկանց և նորապսակ զոյգերի հանդէսներին։ Ամաչում էին նաև նրանց հետ տեսնուելուց, որովհետև կասկածում էին թէ նորածին մանուկի կամ նորապսակ հարս ու փեսայի վրայ ՁԼՀԱ-ի հիւանդութիւն կրգայ, ինչպէս ժողովուրդն է ասում թէ Զլլա կնկնի վրաները։ Զլլայի հիւանդութիւնը վաղուց ի վեր մտած է սնապաշտ ժողովրդի գաղափարի մէջ, որ համոզուած է այս բանում իբր թէ մի աներևոյթ չար ոգի միշտ հետևում է հարուածելու և ՀԱՍՍելու նորածին մանկան կամ մօրը և նորապսակ զոյգերին, այդ ուրիշ նորածին մանկան գլխավերևը գնում էին սուր երկաթի կտոր և Աստուրան։ Զլլա-ի հիւանդութեան առաջն առնելու համար բժշկութիւնը կատարուում էր

յատուկ ձևերով։ Թէկուզ այնքան էլ չյաջողէին։ Երեխայի կամ մօր վրայ Զլլա ընկնելու պատճառը գտնում էին վերոյիշեալ երևոյթների մէջ, և բժշկում էին հետևեալ ձևով։ Մանկան բարուրը տալիս են մի գեռատի աղջկայ գիրկը, որին ուղեկցում է նաև մի տարիքաւոր կին, որանք մանկանը տանում և պատեցնում են հանգստարանի կամ եկեղեցու շուրջ, անց են կացնում դնացկան ջուրի վրայով նաև այն անձնաւորութիւնների տանիքի վրայով (իհարկէ գաղտնի ձևով), որից կասկածում են թէ նա է պատճառ եղել այդ հիւանդութեան, երեխային մաս ուղղանձը, անից մինչև վերադարձելը չպէտք է ոչ յեռաև նայի և ոչ որևէ մէկի հետ խօսայ։ Քառասունքի մէջ եղող կամ չմկրտուած երեխային թէ եկեղեցի և թէ ժողովրդի մէջ կամ ճամբորդութիւն չէին տանել։ Թէև քրիստոնեայի զաւակ լինի, եթէ մկրտուած չլինի հեթանոս է համարուում ժողովրդի մօտ։ Եթէ երեխան չմկրտուած վիճակում մահանայ նրան քրիստոնեայի վայել չէին ամփոփելու։ Անցեալներում նորածին մանկանց մկրտում էին մէկ կամ երկու շաբաթից յետոյ, անկնունք թողնելը երեխային ամիսներով կամ տարիներով մեծ յանցանք էր ծնողների համար, այս բանը շատ է պատահում ներկայ ժամանակներում, մանաւանդ

քաղաքաբնակ ընտանիքների մէջ, տեղի և անտեղի պատճառներով, որոնք այնքան էլ կարևոր արգելքներ չեն երեխային մկրտելու գործի մէջ։ Մկրտութիւնից առաջ մանաւանդ գաւառներում մինչ այժմ էլ տան մէջ ծննդականը իրաւունք չունի գործելու, կամ որևէ գործածելիք ամանի ձեռք տալու, կան նաև ընտանիքներ, որոնք նոյնիսկ առանձնացնում են ծննդականի ուտելիքի ամանը մինչև որ կատարի մկրտութիւնը։ Տարիներ առաջ մանաւանդ գաւառներում, երբ բժիշկ գոյութիւն չունէր, ծննդականի վերահսկող բժիշկը լինում էր տատամայրը. (ժողովրդական բառով տատամէր են ասում), տատամէրը, որ մի բարի, գաղտնապահ, հաւատարիմ և քանիմաց կին էր, ամենի մօտ յարգուած էր հարազատ մօր նման, սա որպէս բժիշկ և ծննդականին ատենահան, ծնունդից մինչև քառասունք, նաև ուշած ժամանակին խնամք էր տանում մօր և մանկան համար։ Նրա խորհրդով էր կատարւում այն անհրաժեշտ գործերը, որոնք վերաբերւում էին ծննդականին։ Եթէ երեխան անհանգստութիւն գտնէր, առաջին հերթին նա էր բժիշկը, որ գիտէր նաև բժշկութեան զանազան ձևերը։

Մկրտութեան ժամանակ տատամայրն էր եկեղեցի տանում երեխային, տատամօր միջոցով

էր երեխայի անունը յայտնւում մկրտող քահանային աւազանի մօտ, եթէ նրա անունը տանեցիք էին որոշում։ Տատամէրը փորձում էր նաև աւազանի ջուրի տաքութեան ստուգանը. երբ մկրտող քահանան նորընծայ կամ անփորձ էր լինում։ Ըստ ժողովրդի սովորութեան, մկրտելու ժամանակ մանկան մայրը եկեղեցում կատարելիք արարողութեան չպէտք է ներկայ լինի, իհարկէ զանազան շրջաններում, այն հաւատալով որ Մարիամ ներկայ չէր Յիսուսի մկրտութեան, նախորդ էջերում այդ առթիւ գրեցի կին մարդ աւազանի մօտ չգալու պատճառը, սակայն այս քանի մէջ մանկան մայրը եկեղեցում մկրտութեան արարողութիւնին չմասնակցելու պատճառն այն է, որ գեռևս նա քառասունքի մէջ լինելով անից չէ կարող դուրս գալ, որովհետև երեխային մկրտում էին ամենաուշը ծնունդից տասն և հինգ օր յետոյ։ Որոշ աւանդութիւնների մասին տես 1 — Սպահանցի Փնրիա գաւառ Արամ, Երնմնաց ու Ջհարմանալ գաւառ, Տեր Աւ. Եղգարեանց. էջ 154—155։

Տոդերիս աւարտին պիտի ասեմ որ, ժողովրդի մէջ եղած այս սովորութիւնները, լինեն աւանդութիւն կամ իրականութիւն, գաւառների գատարկման հետ հերթաբար անհետանում են նահապետական ընտանիքների հետ միասին։ Ա-

ուսանգ ապահ ու հաւատքով ապրող հայ պարզամիտ ժողովուրդը, հաստատուելով մի նոր միջավայրում, շատ բան է կորցնում սոյն աւանդութիւնների հետ, որ մեծ պատկառանքով է պահել ու գուրգուրացել այն ամենը, ինչ որ յիշեցի համառօտաբար այս աշխատանքի մէջ և ինչ որ մօտ է մեր հաւատացեալ հայ ժողովրդի հոգուն և մըտքին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

		էջ
1.	Նախաբան	3
2.	Ներածութիւն	5
3.	Մկրտութիւնը Հայոց մէջ ակզբնական շրջաններում	13
4.	Ներելի և արգելեալ պայմանները մկրտութեան համար հայոց կանոնագրից	21
5.	Մաշտոց կանոնով մկրտութեան	33
6.	Յայտարարութիւն	38
7.	Յաւելուած	40
8.	Անունների մասին	42
9.	Ս. Միւռոն	47
10.	Կնքահայր (քաւոր)	50
11.	Փառք ի բարձունս	54
12.	Նորածին մանկան շուրջ օրհնել կամ Փառք ի բարձունս	56
13.	Մկրտութիւն	58
14.	Դրոշմ	74
15.	Աւանդութիւններ և սովորութիւններ	80

ՆԿԱՏԻԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

էջ	Տող	Տպված է	պիտի լինի
18	8	Քոնեցի	Քոնեցի
18	11	Որտոնեցի	Որտոնեցի
34	9	պաշտպանէ	պաշտպանէ
69	1	դէպքի	դէպքն
73	1	... ցիր	.... ցիք
71	17	աւարան	աւարան
75	19	որ	որ

Ծանօթ. Գրքի շապիկի վրայ եղած նկարները, առնված են Սուրբ Ամենափրկիչ Վանքի Տաճարի որմանկարներից։

ՎԱՐ!

Արժէք՝ $00 Օրիալ

Հասցէ՝
Համազասպ Քեշիշ. Առաքելեան
Ցավի. Թումանեան փողոց, թիւ 5
Նոր Զուղա - Սպահան

معنای تعمید

تالیف: کشیش ه. اراکلیان
چاپخانه کلیسای وانک جلفا-اصفهان
۱۹۸۴